

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Արցախի Նախագահի Յուսահատական Քայլը

Արցախի նախագահ Արայիկ Յարությանն այսօր արժանանում է յայտարարելու Վերածնունդի հրապարակին վրայ նստացույց կատարող քաղաքացիներուն քննադատելով միջազգային հանրության անտարբերությունը Արցախահայության դիմագրաված դժուարություններուն եւ անոնց մարդկային իրաւունքներու ոտնահարման նկատմամբ: Նախագահ Յարությանն սակայն չբաւարարուեցաւ պարզ խնդրանքներով այլ յայտարարեց որ, եթէ մէկ շաբթուան ընթացքին միջազգային միջամտութեամբ Արցախի ժողովուրդի վիճակը չվերադառնայ քիչ թէ շատ կայուն ու բնականոն հուն, ապա ան պիտի դիմէ աւելի կոշտ գործողութիւններու: Թէ ինչ գործողութիւններ նկատի ունի նախագահը յստակ չէ, սակայն յստակ է որ, դանակը հասած է ոսկորին ու սպասելու ժամանակ չկայ այլեւս:

Նախագահի այս քայլը կը յաջորդէ Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարութեան եւ Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշելի վերջին յայտարարութիւններուն:

Ռուսական կողմը թէւ աւելի խիստ կերպով կը պահանջէ Լաչինի միջանցքի բացումը, միւս կողմէ գործնական քայլերու դիմելու պատասխանատուութիւնը իր վրայէն նետելու փորձ կը կատարէ, ըսելով թէ, Հայաստանը ճանչցած է Լեռնային Ղարաբաղը որպէս Ատրպէյճանի մաս: «Մենք կը յարգենք Հայաստանի ղեկավարութեան ինքնիշխան որոշումը, բայց այդ արմատապէս փոխած է այն հիմնարար պայմանները, որոնց ներքոյ ստորագրուած է Ռուսիոյ, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութիւնը, ինչպէս նաեւ տարածաշրջանին մէջ տեղակայուած ռուսական խաղաղապահ զօրախումբին կարգավիճակը: Կը կարծենք, որ այս պայմաններուն մէջ Ղարաբաղի հայ բնակչութեան ճակատագրին պատասխանատուութիւնը պէտք չէ տեղափոխուի երրորդ երկիրներու վրայ»,- ըսուած է Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ:

Նախ Ռուսաստան անոնց շարքին էր, որ կը խրախուսէր Հայաստանը ճանչնալու Ատրպէյճանի հո-

«Եթէ Մէկ Շաբաթուն Արցախի Ժողովրդի Վիճակը Չվերադառնայ Բնականոն Հուն, Դիմելու Ենք Աւելի Կոշտ Գործողութիւններ»

Արայիկ Յարությանն Արցախի Նախագահը Նստացույց Կը Սկսի Ստեփանակերտի Վերածնունդի Հրապարակին Վրայ

Նախագահ Արայիկ Յարությանն ուղերձով հանդէս եկած է՝ յայտարարելով, որ որոշում կայացուցած է միանալ Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ նստացույց յայտարարած քաղաքացիներուն: Միեւնոյն ժամանակ, Արայիկ Յարությանն ընդհանուր առմամբ կոշտ գործողութիւններու պիտի դիմեն, եթէ մէկ շաբթուան ընթացքին միջազգային միջամտութեամբ Արցախի ժողովուրդին վիճակը չվերադառնայ քիչ թէ շատ կայուն ու բնականոն հուն:

Նստացույցի նպատակով վերածնունդի հրապարակին մօտ գետեղուած է յատուկ վրան, ուրկէ նախագահը պիտի շարունակէ իր գործունէութիւնը:

Շրջափակման ամբողջ ընթացքին մենք յոյս ունեցած ենք, որ միջազգային հանրութեան տարբեր դերակատարներ կը վերացնեն շրջափակումը, կը կանխեն անոր հետագայ խորացումը: Սակայն մենք լսած ենք միայն բարի խօսքեր, բայց ո՛չ Եւրոպական յայտարարութեան, ո՛չ ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի հրամաններուն, ո՛չ Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանի որոշումներուն, ո՛չ ալ միջազգային կազմակերպութիւններուն, առանձին պետութիւններուն եւ այլ դերակատարներու կողմէն գործ-



Վերածնունդի հրապարակին մօտ գետեղուած վրանի տակ նախագահ Յարությանն կը կատարէ իր աշխատանքը

նական կատարում այդպէս ալ չտեսանք: Որոշումէ որոշում, կոչէ կոչ Արցախի ժողովուրդին վիճակը երթալով բարդացած է, իսկ Ատրպէյճանը դարձած է աւելի ու աւելի սանձարձակ, ինչ որ կը նշանաւորէ միջազգային իրաւակարգին հոգեվարքը:

Արայիկ Յարությանն իր ելոյթին մէջ ըսաւ. «Դեկտեմբերից Յունիս տեւած հիւժոյղ շրջափակումից եւ վերջին մէկ ամսուայ լրիւ պաշարումից յետոյ այժմ Արցախում ունենք անդի, վառելիքի, դեղորայքի, առողջապահական մաքրութեան եւ այլ առաջին անհ-

րաժեշտութեան պարագաների մեծ սղութիւն, գիւղատնտեսական աշխատանքների գրեթէ ամբողջութեամբ կասեցում, հանրային փո-

Շար.ը էջ 6

ՍԴՀԿ Ներկայացուցիչները Այցելեցին Նախագահ Վահագն Խաչատուրեանին



ՍԴՀԿ ներկայացուցիչները նախագահ Վահագն Խաչատուրեանի հետ

Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեան ընդունեց է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչները Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Համբիկ Սարաֆեանի՝ գլխավորութեամբ:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է Հայաստանի ներկայ մարտահրաշխաններուն, առաջնահերթութիւններուն

եւ անվտանգային խնդիրներուն: ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամները վերահաստատած են իրենց պատրաստակամութիւնը՝ աշխույժ ներգրաւուածութիւն ունենալու եւ աջակցութիւն ցուցաբերելու Հայաստանի առջեւ ծառայած խնդիրներու միասնական լուծումներ փնտռելու եւ համահայկական հարցերու մէջ ջանքերը մէկտեղելու գործին մէջ:

Ֆրանսայի Ծերակոյտի Նախագահը Կը Պահանջէ Արագացնել Սպառազինութիւններու Մատակարարումը Հայաստանին



Ֆրանսիայի Ծերակոյտի նախագահ Ժերար Լարշէ

Ֆրանսիայի Ծերակոյտի նախագահ Ժերար Լարշէն յայտարարած է Ֆրանսայի կողմէ Հայաստանին պաշտպանական զէնք մատակարարելու անհրաժեշտութեան մասին:

«Կը պահանջեմ անյապաղ բանալ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կապող Լաչինի միջանցքը եւ արագացնել Ֆրանսայի կողմէ պաշտպանական սպառազինութիւններու մատակարարումը Հայաստան՝ ապահովելու անոր անվտանգութիւնը», գրած է Լարշէն Թուիթըրով:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Քոչարեանի Ձաւակները Մի Շարք Ընկերութիւններուն Բաժնետէրեր Են Դարձել Այն Ժամանակ, Երբ Իրենց Հայրիկը ՀՀ Նախագահն Էր Ու Արցախի Հարցով Գլխաւոր Բանակցողը

ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանը եւ նրա ընտանիքի անդամները, ինչպէս յայտնի է, ծանուցուել են Օգոստոսի 1-ին ներկայանալու ՀՀ դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վարչութիւն: Դատախազութիւն են կանչուել պաշտօնաթղթով նախագահ Քոչարեանը, նրա կինը՝ Պելլա Քոչարեանը, աւագ որդին՝ Սեդրակ Քոչարեանը, վերջինիս կինը՝ Աժ նախկին պատգամաւոր Վոլոտիա Պատալեանի դուստր՝ Զարուհի Պատալեանը, կրտսեր որդին՝ Լեւոն Քոչարեանը, նրա կինը՝ Երզնէի Սիրանուշ Քոչարեանը (Սիրուշօ), ինչպէս նաեւ Ռ. Քոչարեանի դուստրը՝ Գայեանէ Քոչարեանը, նրա ամուսինը՝ Վիգէն Չատինեանը, որը յայտնի է որպէս «Բարո»-ի Մալինայի»՝ նոյնանուն անշարժ գոյքի գործակալութեան տնօրէն Մալինա Չատինեանի որդի: Civic.am-ը azdarar.am կայքից տեղեկացաւ, որ մասնաւորապէս Սիրուշի, Զ. Պատալեանի, Լ. Քոչարեանի, Բ. Քոչարեանի, Վ. Չատինեանի, Գ. Քոչարեանի գոյքը, որոնց վերաբերել կատարուել է ուսումնասիրութիւն, ենթակայ է բռնագանձման, իսկ Ռոբերտ եւ Սեդրակ Քոչարեանների գոյքի առնչութեամբ կատարուել է ուսումնասիրութիւն, կազմուել է ամփոփագիր: Նկատենք, որ ՀՀ Գլխաւոր դատախազութիւնը Յուլիսի 14-ին յայտնել էր, որ նախնական արդիւնքներով՝ ապօրինի են դիտուել եւ ենթակայ են բռնագանձման Քոչարեաններին պատկանող 20 միւս որ անշարժ գոյք՝ առաւելապէս

Երեւանի կեդրոն վարչական շրջանում տեղակայուած շէնքերում, 2 տրանսպորտային միջոց, մասնակցութիւն հայաստանեան եւ արտասահմանեան 18 իրաւաբանական անձերում, աւելի քան 1.5 միլիոն ԱՄՆ տոլարի աւանդներ եւ արժէթղթեր, մօտ 10 միլիարդ դրամի ֆիզիքական եւ իրաւաբանական անձանց տրամադրուած փոխառութիւններ, շուրջ 22 միլիարդ դրամ, որն իրենից ներկայացնում է ապօրինի ծագում ունեցող դրամական միջոցների մնացորդի, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցուած միջոցների եւ այլ ծախսուած միջոցների հանրագումար, որը չի նոյնականացուել: Յիշեցնենք, որ Ռ. Քոչարեանը 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրութիւններին մասնակցած «Հայաստան» դաշինքի ցուցակի առաջին համարն էր եւ ըստ կարգի, ԿԼՀ էր ներկայացրել իր գոյքի եւ եկամուտների յայտարարագիրը: Ըստ յայտարարագրի՝ Ռոբերտ Քոչարեանը հաշուետու ժամանակահատուածում (2020-2021թ. Մայիսի 1) ունեցել է երկու անշարժ գոյք. մօտ 196 քմ մակերեսով բնակարան Ստեփանակերտ քաղաքում եւ 1716 քմ մակերեսով բնակելի տուն Երեւան քաղաքի Իսկավովի պողոտայի հարեւանութեամբ: Ռոբերտ Քոչարեանը հաշուետու ժամանակահատուածում երեք աղբիւրից է եկամուտ ստացել՝ 28 մլն 915 հազար դրամ՝ արժէկտրոնից (չի նշել վճարողի տուեալները), 78 հազ. 155 ԱՄՆ տոլարի եկամուտ ստացել է ներդրած աւանդ

դից, իսկ 199 հազ. 300 ԱՄՆ տոլար էլ՝ «Սիստեմ» ԲՖԿ-ից: Նշենք, որ Ռոբերտ Քոչարեանը նշուած ժամանակահատուածում հանդիսացել է «Սիստեմ» ԲՖԿ-ի անկախ տնօրէն: Այդ ընկերութիւնում ունի 0,0306% բաժնետոմս: Թեկնածուն յայտարարագրել է նաեւ դրամական միջոցներ. 980 մլն դրամ եւ 1 մլն 927 հազար ԱՄՆ տոլար: «Հայաստան» դաշինքի ցուցակում հանգրուանած նախկին նախագահի կրտսեր որդու յայտարարագրից դատելով էլ վերջինս կարգին ունեցուածքի տէր է: Նա որպէս անշարժ գոյք Երեւանի կեդրոնի «պրեստիժն» փողոցներից մէկում՝ Աբովեանում, մէկ բնակարան է յայտարարագրել՝ 226 քմ մակերեսով, նոյն փողոցում գտնուող 20 քմ մակերեսով մէկ աւտոտնակ, Վազգէն Սարգսեան փողոցում գտնուող 203 քմ տարածքով գրասենեակային տարածք: Որպէս շարժական գոյք Քոչարեանը յայտարարագրել է «2013թ. TOYOTA RAV 4 2.5» եւ 2019 թ. TOYOTA CAMRY 3.5 P» աւտոմեքենայ: Որպէս եկամուտ կրտսեր Քոչարեանը յայտարարագրել է «Նախրի ինչուրանս»-ից ստացած 604 մլն 200 հազար դրամ շահույթ եւ աշխատավարձը՝ 17 մլն 604 հազար դրամ, ինչպէս նաեւ «Մենեջմենթ սիսթեմզ ինթերնեշնլ»-ից վարձակալութեան դիմաց ստացած 14 մլն 997 հազար 775 դրամը: Հայտարարագիրը ներկայացնելու օրուայ դրութեամբ ունեցել է 161 մլն 280 հազար 640 դրամ եւ 395 հազար 459

ԱՄՆ տոլար: Քոչարեանը ունի բաժնետոմսեր հետեւեալ ընկերութիւններում՝ «Նախրի ինչուրանս»՝ 60 տոկոս, «Ջեմկոմինպեստ»՝ 50 տոկոս, «Սփեյս մենեջմենթ»՝ 33,3 տոկոս, եւ 0,70 տոկոս բաժնետոմս՝ «Էքզել աութդոր» ընկերութիւնում: Ինչ վերաբերում է Քոչարեանի միւս որդու՝ Սեդրակի ունեցուածքին, ապա նա մի շարք ընկերութիւններում փայտէր է: Մասնաւորապէս, ըստ պետական ռեգիստրի տուեալների, նա 50 տոկոս ուղղակի մասնակցութիւն ունի էՅԴԻ ՍՔՐԻՆ ՍՊԸ-ում, միւս 50 տոկոս ուղղակի մասնակցութեամբ շահառուն «Տ-Պր արթ»-ի սեփականատէր Արմէն Թաւադեանն է: Ս. Քոչարեանը 80 տոկոս ուղղակի մասնակցութիւն ունի նաեւ «ԳՐԻՏ-ՏԻ» ՍՊԸ-ում, միւս շահառուն՝ 20 տոկոս մասնակցութեամբ, Պերճ Օհանեանն է: «Սփեյս ՄԵՆԵՋ-ՄԵՆԹ» ՍՊԸ-ում ուղղակի մասնակցութեամբ իրական շահառուներն են Քոչարեանի զաւակները՝ Սեդրակ Քոչարեանը՝ 33.4 %, Գայեանէ Քոչարեանը՝ 33.3 % ուղղակի մասնակցութեամբ եւ ինչպէս նշեցինք՝ Լեւոն Քոչարեանը: Մէկ այլ ՍՊԸ-ում՝ «ԹՈՅՈ-ԹԱ ԵՐԵՒԱՆ»-ում, Սեդրակ Քոչարեանն ունի 30 % (երկուսը միասին) ուղղակի մասնակցութիւն, միւս շահառուն հետախուզման մէջ

Շար.ը էջ 15

Նահանջ Պրիւսելում. Խաղաղութեան Հարթա՞Կ, Թե՞ Թակարդ

ՅԱԿՈՒ ԲԱՐԱԵԱՆ

Յուլիսի 15-ին Պրիւսելում տեղի ունեցած Փաշինեան-Միշել-Ալիէ եռակողմ հանդիպումից յետոյ ԵՆ նախագահ Միշելի տարածած յայտարարութիւնն աչքի է ընկնում առաջին հերթին նրանով, որ ի տարբերութիւն օրինակ մէկ ամիս առաջ՝ Մայիսի 14-ին տեղի ունեցած հանդիպմանը յաջորդած յայտարարութեան, այս անգամ որեւէ խօսք չկայ «մնացած պահուող անձանց» ազատ արձակման մասին, փոխարէնը խօսուած է ընդամէնը «սահմանը ապահով հատած ձերբակալուածների վերադարձը հեշտացնելու» խոստման մասին, որ ըստ Միշելի տուել են Փաշինեանն ու Ալիէնը: Սա ուշադրութեան արժանի հանգամանք է ոչ միայն այն պատճառով, որ վերաբերում է մարդկային կեանքերի, կարեւոր խնդրի, Ատրպէյճանում պահուող հայ գերիների վերադարձի: Մարդասիրական այդ հարցում բաւականին նկատելի է նահանջը, առնուազն ձեւակերպումների առումով: Նախ, Մայիսի 14-ի հանդիպումից յետոյ մէկ ամիս անց ոչ միայն որեւէ «մնացած պահուող անձ» վերադարձուած չէ, չնայած դրանից յետոյ յայտարարութեան մէջ նշուածին, այլ փաստորէն մէկ ամիս անց այդ մասին նոյնիսկ խօսք չկայ եւ չեղուում է լուր սահմանը «պատա-

հաբար հատածների» մասին, իսկ այդ «կատեգորիայի» ներքոյ են յայտնի ատրպէյճանցի երկու գինձառայողները, որոնցից մէկը նաեւ սպանել էր Զանգեզուրի կոմբինատի պահակին: Յայտնի է նաեւ, որ Պաքուն աւելի ուշ պարզապէս առեւանգեց երկու հայ գինձառայող, այսպէս ասած «հաւասարեցնելու» համար: Եւ հիմա, Միշելը խօսում է փաստացի այդ մասին, իսկ հայ գերիների մասին չկայ խօսք: Եւ սա ցուցիչ է, թէ գործնականում ինչպիսին է Պրիւսելի բանակցութեան միջնորդան ու տրամաբանութիւնը: Չի կարող մարդասիրական հարցերում լինել այդպիսի պատկեր, իսկ միւս, առաւել բարդ, քաղաքական խնդիրներում՝ խաղաղութեան տանող կայուն եւ յուսադրող ընթացք: Յամենայն դէպս պատկերը, որ կայ առերեւոյթ, այլ բան չէ, քան ԵՆ նախագահի մակարդակով Ատրպէյճանի նախագահի վարած ազդեցիւ քաղաքականութեան «համահարթեցում» եւ հաւասարեցում Հայաստանի հռչակած՝ խաղաղութեան օրակարգի միտումը քաղաքականութեանը: Աւելին, մէկ այլ ցուցիչ է այն, որ մի կողմից խօսելով Լաչինի միջանցքի բացման անհրաժեշտութեան մասին, միւս կողմից Շարլ Միշելը ընդգծում է Արցախում մարդասիրական օգնութիւն ցուցաբերելու Իլհամ Ալիէի «կամքը»:

Այն ամէնից յետոյ, ինչ անում է Պաքուն, Ալիէի այդպիսի «կամք» մատնանշելը պարզապէս ցինիզմ կամ կատարեալ քաղաքական անհամարժէքութիւն է, որ դրսեւորում է ԵՆ նախագահը: Այդ հանգամանքները բաւականին պարզորոշ վկայում են, որ Պրիւսելում ծաւալուող գործընթացը եւ դրա շրջանակում հերթական հանդիպումը ոչ թէ հաւասարակշռում են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ առկայ իրողութիւնները, իսկ որեւէ կայուն խաղաղութիւն կարող է կառուցուել միայն հաւասարակշռութեան վրայ, այլ հակառակը՝ «լեզիտիմացնում» այն անհաւասարութիւնը, որը փորձում է կայտարարելու Ատրպէյճանը: Այդպէս գնում են ոչ թէ խաղաղութեան, այլ նոր լարուածութեան, եթէ անգամ զուտ բանակցային սենեակում միջնորդող կարող է լինել խաղաղասիրական: Կրկնեմ, խաղաղութիւնը կարող է կայուն եւ ամուր լինել, եթէ կառուցուում է հաւասարակշռութեան, ոչ թէ անհաւասարութիւնը լեզալիզացնելու տրամաբանութեան վրայ: Պրիւսելի Յուլիսի 15-ի հանդիպումից յետոյ Շարլ Միշելի յայտարարութիւնը վկայութիւն էր, որ այդ ձեւաչափում տեղի է ունենում անհավասարութեան լեզալիզացիա: Այդպէս լինում են խաղաղութեան թակարդները, ոչ թէ հարթակները: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

ՌԴ Դեսպանատան Սօս Տեղի Ունեցաւ Բողոքի Շարժում Լաչինի Միջանցքը Բանալու Յարցով



Ցուցարարները Ռուսաստանի դեսպանատան մօտ

ՄԱԿ-ի երեւանեան գրասենեակին մօտ մեկնարկած բողոքի շարժումը՝ ի աջակցութիւն Ատրպէյճանի կողմէ ամբողջական շրջափակման մէջ գտնուող Արցախի, շարունակուեցաւ Հայաստանի մէջ Ռուսաստանի դեսպանատան մօտ:

Շարժումին մասնակիցները ՄԱԿ-ի երեւանեան գրասենեակին մօտէն երթով շարժեցան դէպի Ռուսաստանի դեսպանատուն:

Շարժումին մասնակիցները Ռուսաստանէն պահանջեցին քայլեր ձեռնարկել բանալ Լաչինի միջանցքը բանալու ուղղութեամբ:

44-օրեայ պատերազմին վերաւորուած գինուորի մայր Ատեւրի Աւետիսեանը նշեց, որ 2020 թուականի Նոյեմբեր 9-էն յետոյ Ռուսաստանը դարձած է Արցախի բնակչութեան անվտանգութեան երաշխաւորը՝ լաւելելով, որ Արցախի ժողովուրդը հաւատաց

Ռուսիոյ խոստումներուն եւ վերադարձաւ Արցախ:

Ատրպէյճանական ԽՍՀ-էն փախստականներու համագումարի համակարգող Մարիամ Աւագեան իր ելույթին մէջ նշեց, որ Լաչինի միջանցքով Հայաստանի հետ կապի խզումը հայերը Արցախէն դուրս մղելու մեթոտներէն է: «Ատրպէյճանն, անշուշտ, ուզում է դատարկուած Արցախ, եւ եթէ հայերն իրենց կամքով չհեռանան, որեւէ կասկած չկայ, որ Ատրպէյճանն այդ հարցը կը փորձի լուծել ռազմական ճանապարհով՝ անելանելի պայմաններ ստեղծելով արցախցիներին համար, ինչն այսօր անուժ է՝ կրակելով դաշտում աշխատող հայերի վրայ:

Շարժումի ընթացքին կազմակերպիչներուն հետ հանդիպում եւ առանձին քննարկում ունեցաւ ՌԴ դեսպանատան ներկայացուցիչը:

Վիթալի Բալասանեանի Դէմ 3 Մեղադրանք Առաջադրուած Է

Արցախի Անվտանգութեան Խորհուրդի նախկին քարտուղար, Արցախի հերոս Վիթալի Բալասանեանի առանձնատան խուզարկութենէն յետոյ անոր 3 մեղադրանք առաջադրուած է՝ իշխանութեան ներկայացուցիչի նկատմամբ կեանքի կամ առողջութեան համար ոչ-վտանգաւոր բռնութիւն գործադրելու, ապօրինի կերպով գէնք, ռազմամթերք ու թմրամիջոցներ պահելու համար, «Ազատութեան» այսօր յայտնեց նախկին բարձրաստիճան պաշտօնեայի փաստաբան Ռաֆայէլ Մարտիրոսեանը:

Ըստ պաշտպանին՝ Բալասանեանը մեղադրեալ է նաեւ ամիսներ առաջ յարուցուած մէկ այլ քրէական գործով: Արցախի Անվտանգութեան Խորհուրդի նախկին քարտուղարը կը մեղադրուի առանձնապէս խոշոր չափերու գոյք յափշտակելու համար: 64-ամեայ Բալասանեանը չ'ընդունիր իրեն առաջադրուած մեղադրանքները:

Դատարանը մերժած է Վիթալի Բալասանեանը կալանաւորելու Քննչական կոմիտէին միջնորդութիւնը: Ան ձերբակալուած էր Յուլիս 13-ի երեկոյեան, նոյն օրը իրաւապահները ձերբակալած էին նաեւ անոր որդին, եղբայրը: Անոնք աւելի վաղ ազատ արձակուած էին:



Արցախի Անվտանգութեան Խորհուրդի նախկին քարտուղար, Վիթալի Բալասանեան

Արցախի Դատախազութիւնը այս ձերբակալութիւններէն յետոյ հաղորդագրութիւն տարածած էր, որուն մէջ Բալասանեանի որդիին անունը կը մատնանշուէր: Ըստ իրաւապահներուն՝ անոր «տրամադրուած է 74 միլիոն 500 հազար դրամ փոխառութիւն՝ մեղուաւորանիքներ ձեռք բերելու նպատակով, սակայն տրամադրուած գումարը օգտագործուած է ոչ-նպատակային: Մինչդեռ Բալասանեանները վարկը ոչ-նպատակային օգտագործելու կասկածանքը անհիմն կը համարեն:

Ատրպէյճանը Կը Փորձէ Բնապահպանական Մեղադրանքներ Ներկայացնել Փաշինեան

Ատրպէյճանը պաշտօնական եւ ոչ-պաշտօնական մակարդակով կը փորձէ բնապահպանական բնութի մեղադրանքներ ներկայացնել Երեւանին, կառավարութեան նիստին յայտնեց վարչապետ Փաշինեան՝ ըստ հուլիսեան արձագանգելով աւելի քան 2 տասնեակ ատրպէյճանական հասարակական կազմակերպութիւններու՝ Հայաստանի խոշոր հանքարդիւնաբերական ընկերութիւններու գործունէութիւնը դադարեցնելու պահանջին:

«Ընդ որում՝ սրա համար Ատրպէյճանը Հայաստանին վերագրում է հանքավայրեր, որոնք պարզապէս գոյութիւն չունեն, բարձրաձայնում է հանգամանքներ, որոնք մտացածին են», յայտնեց վարչապետը:

Անցեալ շաբաթ ատրպէյճանական 24 հասարակական կազմակերպութիւններ, որոնք իրենց բնապահպաններ եւ առողջապահութեան ոլորտի մասնագէտներ կը ներկայացնեն, բաց նամակով դիմած էին վարչապետ Փաշինեանին՝ պահանջելով կասեցնել Հայաստանի շարք մը մետաղաձուլական ընկերութիւններուն աշխատանքը: Անոնք, իրենց պնդմամբ, բնապահպանական միջազգային չափանիշներուն չեն համապատասխաներ:

Ատրպէյճանցի բնապահպանները կը նշեն, թէ հանքավայրերու շահագործումը կը վտանգէ ոչ միայն Հայաստանի, այլեւ հարեւան երկիրներու շրջակայ միջավայրը: Ատրպէյճանական հասարակական կազմակերպութիւնները 12 հանքավայրի մասին կը նշեն, ցանկին մէջ են, օրինակ, Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանը, Սոթքի ոսկիի հանքը, տակաւինս չհասագործուող Ամուլսարը, Երասխի մէջ կառուցուող մետաղաձուլական գործարանը: Անոնք վարչապետին կը խնդրեն բանալ Հայաստանի բոլոր հանքավայրերուն դռները



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան

ատրպէյճանցի փորձագէտներուն առջեւ ու ապահովել բոլոր պայմանները այնտեղ վերահսկողութիւն իրականացնելու համար:

«Հայաստանի պետական եւ մասնաւոր հատուածի կազմակերպութիւններն, ի հարկէ, հատ-հատ ի ցոյց են դնում եւ կը շարունակեն ի ցոյց դնել Ատրպէյճանի մեղադրանքների մտացածին լինելը», ըսաւ Փաշինեան:

Նիկոլ Փաշինեան թեմային վերաբերեալ երկար չխօսեցաւ, միայն մէկ ցուցանիշով կիսուեցաւ: ԱՄՆ ԵՏՅԻ համալսարանի պետութիւններու բնապահպանական վիճակին վերաբերեալ 2022 թուականի դեկտեմբերի մէջ Հայաստանը 56-րդն է 180 երկիրներու շարքին, Ատրպէյճանը՝ 104-ը:

«Վարկանիշային աղիւսակը չափում է պետութեան ձեռքբերումները բնապահպանական վիճակի տեսանկիւնից, հիմնուած է բնական պաշարների կառավարման 22 ցուցանիշների եւ 10 դասակարգերի վրայ», ընդգծեց կառավարութեան ղեկավարը:

Ռոպերթ Քոչարեանի Գոյքերու Նկատմամբ Կիրառուած Է Նախնական Ապահովման Միջոց

Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառուած են Ռոպերթ Քոչարեանի եւ անոր փոխկապակցուած եօթը անձի (ընտանիքի անդամներ՝ կին, զաւակներ, անոնց ամուսիններ) գոյքերու նկատմամբ Հակափտածութեան Դատարանին որոշմամբ:

Որոշումը ընդունուած է Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութեան դիմումի հիման վրայ:

Ուսումնասիրութեան նախնական արդիւնքներով ապօրինի դիտուած են եւ ենթակայ են բռնագանձման՝ 20 միաւոր անշարժ գոյք՝ առաւելապէս Երեւանի Կեդ-

րոնը գտնուող շէնքերու մէջ, 2 փոխադրութեան միջոց, մասնակցութիւն հայաստանեան եւ արտասահմանեան 18 իրաւաբանական անձերու մէջ, աւելի քան 1,5 միլիոն տոլարի աւանդներ եւ արժեթուղթեր, շուրջ 10 միլիառ դրամի ֆիզիքական եւ իրաւաբանական անձերու տրամադրուած փոխառութիւններ, շուրջ 22 միլիառ դրամ, որ կը ներկայացնէ ապօրինի ծագում ունեցող դրամական միջոցներու մնացորդի, բարեխիղճ երրորդ անձերու փոխանցուած միջոցներու եւ այլ ծախսուած միջոցներու հանրագումար, որ չէ նոյնականացուած, նշուած է Դատախազութեան հաղորդագրութեան մէջ:

2023 Թուականին Բարձր Տնտեսական Աճ Ապահովելու Շատ Լաւ Հնարաւորութիւն Ունինք Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ Հայաստանը ունի շատ լաւ հնարաւորութիւն առաջին հինգ ամսուան ցուցանիշերով 2023 թուականին նոյնպէս ապահովել բարձր տնտեսական աճ: Փաշինեան այս մասին յայտարարեց կառավարութեան նիստին ժամանակ:

«Ունենք շատ լաւ հնարաւորութիւն յառաջիկայ հինգ ամսուայ ցուցանիշերով 2023 թուականին նոյնպէս ապահովել բարձր տնտեսական աճ:

Այս առումով ուզում եմ ուշադրութիւն հրաւիրել ընդհանուր ծախսերի իրականացման մեր կշռութիւն ու որակին: Ծախսերի մասին խօսելիս՝ երբեք չպէտք է մոռանալ որակի մասին, որովհետեւ ծախսն առանց որակի միջոցների վատնում է, դա պէտք է բացառել», ըսաւ ան:

ԼՈՒՐԵՐ

Պրիւքսէի Մէջ Կայացաւ Փաշինեան-Ալիեւ-Միշել Եռակողմ Յանդիպումը



Պրիւքսէի մէջ կայացած Փաշինեան-Ալիեւ-Շարլ Միշել հանդիպումը

Պրիւքսէի մէջ կայացաւ Փաշինեան-Ալիեւ հանդիպումը՝ մասնակցութեամբ Հիւրընկալող Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշելի, Հայաստանի եւ Ատրպէյճանի:

Հայաստանի կառավարութեան տարածած հաղորդագրութեան համաձայն՝ հանդիպման ընթացքին քննարկուած են Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքին ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած խորացող մարդասիրական ճգնաժամին, երկու երկիրներուն միջեւ սահմանազատման եւ սահմանային անվտանգութեան ապահովման աշխատանքներուն, տարածաշրջանային փոխադրութեան եւ տնտեսական ենթակառուցուածքներու ապաշրջափակման, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման համաձայնագրին, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի իրաւունքներուն եւ անվտանգութեան հասցէագրման, ինչպէս նաեւ գերիներու, անհետ կորսուածներու հարցերը:

Պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է աշխուժացնել աշխատանքները քննարկուած հարցերու կարգաւորման ուղղութեամբ:

Ատրպէյճանի նախագահ Մամլուք ծառայութիւնը կը տեղեկացնէ, որ Պրիւքսէի մէջ Ալիեւ-Փաշինեան-Միշել բանակցութիւններու ընթացքին քննարկուած է այդ շարքին «Ատրպէյճանի տարածքներէն հայկական զօրամասերու դուրսբերումը եւ ապօրինի կազմաւորումներու գինաթափումը»:

«Զրոյցի ընթացքին միտքեր փոխանակուած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման, խաղաղ գործընթացի շուրջ բանակցութիւններու շարունակման, սահմաններու սահմանազատման, ճանապարհային հաղորդակցութիւններու բացման, Ատրպէյճանի տարածքներէն հայկական զօրամասերու դուրսբերման եւ ապօրինի կազմաւորումներու գինաթափման շուրջ», կ'ըսուի ատրպէյճանական կողմի հաղորդագրութեան մէջ:

Պրիւքսէի եռակողմ հանդիպումէն առաջ Եւրոպական խորհուրդի նախագահը առանձին հանդիպած է թէ՛ Հայաստանի ու թէ՛ Ատրպէյճանի ղեկավարներուն հետ: Փաշինեան Արցախի նախագահին նամակը փոխանցած է Շարլ Միշելին:

Պրիւքսէի մէջ Նիկոլ Փաշինեանի ու Իլհամ Ալիեւի հետ գրեթէ երեք ժամ տեւած հանդիպումէն յետոյ Եւրոպական խորհուրդի նա-

խագահը կարեւոր համարեց Ադրամով մարդասիրական մատարակարարութեան իրականացնելու Ատրպէյճանի պատրաստակամութիւնը, միաժամանակ շեշտեց, որ Արցախը Հայաստանին կապող միակ Լաչինի ճանապարհը պէտք է բացուի:

«Ես շեշտած եմ, որ անհրաժեշտ է բանալ Լաչինի ճանապարհը, նաեւ ընդգծած եմ Ադրամով մարդասիրական մատակարարումներ իրականացնելու Ատրպէյճանի պատրաստակամութիւնը: Ես երկու տարբերակն ալ կարեւոր կը համարեմ եւ կոչ կ'ընեմ երկու կողմին ալ իրականացնելու մարդասիրական մատակարարումներ, որպէսզի տեղի բնակչութեան կարիքները բաւարարուին», ըսաւ Միշել՝ նաեւ ողջունելով միջազգային կարմիր խաչի կողմէ բժշկական տարանսուծումներու վերականգնումը:

Անկեղծ ու բովանդակային գնահատելով Հայաստանի ու Ատրպէյճանի առաջնորդներուն բանակցութիւնները՝ Եւրոպական խորհուրդի նախագահը ըսաւ, որ անդրադարձած են նաեւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի իրաւունքներուն ու անվտանգութեան:

«Տեղի բնակչութիւնը հաւաստիացումներու կարիք ունի՝ առաջին հերթին իր իրաւունքներուն ու անվտանգութեան վերաբերեալ: Այս ծիրին մէջ ես արտայայտած եմ Եւրոմիութեան աջակցութիւնը Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար շրջանի եւ Պաքուի ուղիղ երկխօսութեան: Այս երկխօսութիւնը պէտք է ապահովէ բոլոր կողմերուն համար այդքան անհրաժեշտ վստահութիւնը», ընդգծեց Միշել:

Անդրադառնալով խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւններուն՝ Եւրոպական խորհուրդի նախագահը յայտնեց, որ այժմ անոնց ամենավճճական փուլն է. «Ես կը գովաբանեմ առաջնորդներուն խաղաղութեան գործընթացին նկատմամբ իրենց յստակ յանձնառութեան համար եւ անոնց կոչ կ'ընեմ ձեռնարկելու յաջորդ խիզախ քայլերը՝ ապահովելու կարգաւորման ճանապարհին վճռական ու անշրջելի յառաջընթաց»:

Խոստովանելով, որ այս հանդիպումը կայացաւ այնտեղ աճող լարուածութեան լոյսին տակ, Միշել կարեւորեց քաղաքական քննարկումները՝ տեղեկացնելով, որ այս անգամ եւս վարչապետ Փաշինեանն ու նախագահ Ալիեւը վերահաստատած են յարաբանքը միւս երկրի տարածքային ամբողջականութեան ու ինքնիշխանութեան նկատմամբ:

Ռուսիան Ատրպէյճանին Խստօրէն Կոչ Կ'ընէ Ապաշրջափակելու Լաչինի Միջանցքը

Ռուսիան խստօրէն կոչ կ'ընէ Ատրպէյճանի ղեկավարութեան՝ շտապ միջոցներ ձեռնարկելու Լաչինի միջանցքը անյապաղ ապաշրջափակելու համար: Այս մասին յայտարարութիւն տարածած է Ռուսաստանի Դաշնութեան Արտաքին Գործերու Նախարարութիւնը:

Նախարարութիւնը մտահոգիչ համարած է, որ այսօր Լեռնային Ղարաբաղի շուրջ իրավիճակը կը զարգանայ բացասական ձեւով:

«Մարդասիրական ճգնաժամը երկարով կը խորանայ: Բնակչութիւնը սննդամթերքի, դեղորայքի, առաջին անհրաժեշտութեան ապրանքներու սուր պակասունի, գործնականին մէջ գրկուած է ելեկտրականութեան ու կազէն: Սա կրնայ ամենադրամատիկ հետեւանքները բերել Ղարաբաղի հայրենիքին՝ շրջանի հասարակ բնակիչներուն համար: Մենք խստօրէն կոչ կ'ընենք Ատրպէյճանի ղեկավարութեան՝ շտապ միջոցներ ձեռնարկելու՝ Լաչինի միջանցքը անյապաղ ապաշրջափակելու, երկու ուղղութեամբ քաղաքացիներու, փոխադրութեան միջոցներու, բեռներու անխոչընդոտ տեղաշարժը վերսկսելու համար, ինչպէս նաեւ վերականգնելու ելեկտրամատակարարումը», ըսուած է յայտարարութեան մէջ:

Ռուսիոյ արտաքին գերատեսչութեան նաեւ նշած են, որ 2022 թուականի Հոկտեմբերին եւ 2023 թուականի Մայիսին ԵՄ հովանիին ներքոյ տեղի ունեցող հանդիպումներուն Հայաստանը ճանչցած է Լեռնային Ղարաբաղը որպէս Ատրպէյճանի մաս:

«Մենք կը յարգենք Հայաստանի ղեկավարութեան ինքնիշ-

խան որոշումը, բայց այդ արձատապէս փոխած է այն հիմնարար պայմանները, որոնց ներքոյ ստորագրուած է Ռուսիոյ, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութիւնը, ինչպէս նաեւ տարածաշրջանին մէջ տեղակայուած ռուսական խաղաղապահ զօրախումբին կարգավիճակը: Կը կարծենք, որ այս պայմաններուն մէջ Ղարաբաղի հայ բնակչութեան ճակատագրին պատասխանատուութիւնը պէտք է տեղափոխուի երրորդ երկիրներու վրայ: Անհրաժեշտ է անյապաղ սկսիլ Պաքուի եւ Երեւանի միջեւ խաղաղութեան պայմանագրի նախապատրաստումը՝ նախապէս ձեռք բերուած պայմանաւորութիւններու հիման վրայ», նշած են Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան:

Ռուսական կողմը շեշտած է, որ այդ համաձայնագրի անբաժանելի մասը պէտք է ըլլան Ղարաբաղի հայերու իրաւունքներուն եւ անվտանգութեան յուսալի եւ յստակ երաշխիքները, ինչպէս նաեւ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ եռակողմ պայմանագրերու ամբողջ փաթեթի խիստ կատարումը, այդ շարքին՝ ճանապարհային հաղորդակցութիւններու ապաշրջափակումը եւ հայ-ատրպէյճանական սահմանի սահմանազատման գործընթացին մեկնարկը:

Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան լաւեւած են, որ հաշուի առնելով վերոգրեալը՝ ռուսական կողմը կը հաստատէ ԼՂ-ի մէջ բնականոն կեանքի վերականգնման ուղղուած միջազգային հանրութեան ջանքերուն աշխուժօրէն նպաստելու իր վճռականութիւնը:

Երտողան. «2025-ին Ռուս Խաղաղապահները Պէտք Է Հեռանալ Լեռնային Ղարաբաղէն»

Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողան յայտնած է, թէ 2025 թուականին ռուս խաղաղապահները պէտք է հեռանան «Ատրպէյճանի Ղարաբաղի շրջանէն»:

Անոր խօսքով, Ատրպէյճանի, Հայաստանի եւ Ռուսաստանի 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ համաձայնագրով ռուսական խաղաղապահ զօրախումբը պէտք է Ղարաբաղի մէջ տեղակայուած ըլլալ 5 տարի:

«2025-ին Ռուսաստանը պէտք է հեռանայ այդ տարածքէն: Այդ գրուած է համաձայնագրին մէջ, եւ ես կը հաւատամ, որ Ռուսաստանը պիտի կատարէ անոր պահանջը», յայտնած է Թուրքիոյ ղեկավարը:

Այդ մեկնաբանութիւններով Էրտողան հանդէս եկած է վիլնիւսի մէջ ՆԱԹՕ-ի գագաթաժողովի աւարտէն յետոյ տեղի ունեցած ասուլիսի ընթացքին:

Մենք Մշտապէս Հայաստանի Կողքին Ենք. Եալ Պրաուն-Փիլէն՝ Ալէն Սիմոնեանին

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանի գլխաւորած պատուիրակութիւնը հանդիպած է Ֆրանսայի Հանրապետութեան Աժ նախագահ Եալ Պրաուն-Փիլէին:

Գործընկերները արձանագրած են, որ այս հանդիպումը շարունակութիւնն է անկեղծ բարեկամութեան եւ հետեւողական գործընկերային քաղաքականութեան: Անոնք գոհունակութիւն յայտնած են հայ-ֆրանսական միջխորհրդարանական գործակցութեան բարձր մակարդակի առնչութեամբ, որ կը վերաբերի նաեւ միջխորհրդարանական բարեկամական խումբներուն: Ալէն Սիմոնեանը կարեւորած է այն փաստը, որ ֆրանսացի բոլոր գործընկերներուն հետ հանդիպումները կ'անցնին Հայաստանի մասին քաջատեղեակ միջոցառումներէ:

Ան նշած է, որ Հայաստանը բարձր կը գնահատէ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի շարունակական միջնորդական ջանքերը, ինչպէս նաեւ խորհրդարանականներու հետեւողական աջակցութիւնը եւ Հայաստանի հետ մշտական կապի մէջ ըլլալը:

Հանդիպման ընթացքին միտքեր փոխանակուած են Ատրպէյճանի մէջ պահուող հայ գերիներու անյապաղ վերադարձին, Հայաստանի մէջ ԵՄ դիտորդական առաքելութեան աջակցութեան, Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներու եւ անվտանգութեան երաշխիքներու սահմանման շուրջ: Ֆրանսայի Աժ նախագահը նշած է, որ մշտապէս Հայաստանի կողքին են եւ պիտի շարունակեն ներդնել բոլոր ջանքերը:

Եւրոխորհրդարանի Յանձնաժողովը Թուրքիոյ Կոչ Ըրած Է Ծանցնալու Հայոց Յեղասպանութիւնը



Եւրոխորհրդարանի՝ Միջազգային յարաբերութիւններու հարցերով կոմիտէն դիմած է Անգարային՝ կոչ ընելով ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը: Այս մասին ըստուած է ԵՄ-ի մէջ Հայկական պատուիրակութեան 2022 թուականի Թուրքիոյ հարցով կոմիտէի գեկոյցին մէջ:

Կոմիտէն կ'աջակցի Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման՝ ելլելով «հաշտեցման, տարածաշրջանային կայունութեան եւ անվտանգութեան» շահերէն:

Այն կոչ կ'ընէ շուտափոյթ իրականացնելու յատուկ ներկայացուցիչներու ձեռք բերած պայմանաւորութիւնները, ինչպիսիք են օդային տարածքի եւ երկու

երկիրներուն միջեւ սահմանի բացումը:

Զեկուցը կ'ողջունէ մինչ այժմ ձեռք բերուած յառաջընթացը եւ գոհունակութեամբ կը նշէ Հայաստանի վարչապետին ներկայութիւնը Թուրքիոյ նախագահի երդմնակալութեան:

«Կոմիտէն Թուրքիոյ կոչ կ'ընէ ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը՝ Թուրք եւ հայ ժողովուրդներուն միջեւ իրական հաշտեցման ուղի հարթելու համար», կ'ըսուի գեկոյցին մէջ:

Փաստաթուղթը նաեւ Թուրքիոյ կոչ կ'ընէ ամբողջութեամբ կատարելու հայկական մշակութային ժառանգութիւնը պաշտպանելու իր պարտաւորութիւնները:

Ատրպէյճան Պարտադիր Պետք Է Բանայ Լաչինի Միջանցքը. ՄԻԵԴ-ը Վերահաստատեց Նախկին Որոշման Կատարման Անհրաժեշտութիւնը

Յուլիս 12-ին Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանը՝ ուսումնասիրելով Լաչինի միջանցքը ապաշրջափակելու առնչութեամբ Ատրպէյճանի նկատմամբ միջանկեալ միջոցներ կիրառելու ՀՀ կառավարութեան պահանջը՝ որոշած է վերահաստատել իր՝ 2022 թուականի Դեկտեմբեր 21-ին կայացուցած որոշումը, այն է՝ պարտաւորեցնել Ատրպէյճանին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ եւ բաւարար միջոցները՝ ապահովելու «Լաչինի միջանցքով» Հայաստանի մէջ բժշկական օգնութիւն ստանալու կարիք ունեցող ծանր հիւանդ անձերու տեղաշարժը, ինչպէս նա-

եւ ճանապարհին անապաստան մնացած կամ ապրուստի միջոցներու կարիք ունեցող անձերու անվտանգ տեղաշարժը:

Այդ մասին կը յայտնեն Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչին գրասենեակէն:

Սոյն որոշմամբ Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանը փաստացի վերահաստատած է գործող իրադրութեան պայմաններու մէջ իր 2022 թուականի Դեկտեմբեր 21-ի որոշման կատարման անհրաժեշտութիւնը եւ այն պէտք է պարտադիր կատարուի Ատրպէյճանի կողմէ:

Եւրոպական Խորհրդարանը Ատրպէյճանը Մեղադրած Է ԵխիւՎ Պատգամաւորները Կաշառելու Մէջ

Եւրոպական Խորհրդարանը հրապարակած է Յուլիս 13-ին ընդունուած բանաձեւը թափանցիկութեան, հաշուետուողականութեան եւ հակափտածութեան կանոններու բարեփոխման առաջարկութիւններուն վերաբերեալ, ուր անդրադարձ կայ նաեւ Ատրպէյճանին:

Բանաձեւի կէտերուն մէջ, ի թիւս այլ երկիրներու եւ կազմակերպութիւններու կողմէ իրականացուած խախտումներուն, կը նշուի

նաեւ, որ Ատրպէյճանը լայնածաւալ ազդեցութեան եւ փտածութեան հիմնաւոր կասկածներ յարուցող գործողութիւններ իրականացուցած է ԵՆԽՎ պատգամաւորներու նկատմամբ:

Կը նշուի նաեւ, որ Ատրպէյճանը կրցած է կանխել իր ընտրութիւններուն հետ կապուած հետաքննութիւնը, ինչպէս նաեւ կոծկել իր կողմէ մարդու իրաւունքներու ոտնահարումները:

ԶՈՒ ԳՇ Պետ Էտուարտ Ասրեանը Աշխատանքային Այցով ԱՄՆ Կը Գտնուի



Էտուարտ Ասրեան Ամերիկացի զինուորականներուն հետ հանդիպումի ընթացքին

Աշխատանքային այցով ԱՄՆ գտնուող ՀՀ Զինուած Ուժերու Գերագոյն Շտաբի պետ, պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ, զորավար-լեյթենանթ Էտուարտ Ասրեանը Յուլիս 17-18-ին մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ մասնակցած է ԱՄՆ Ազգային պաշտպանութեան նահանգային համագործակցութեան ծրագրի 30-ամեակին նուիրուած համաժողովին:

Միջոցառման ընթացքին, Ասրեան հանդիպումներ ունեցած է ԱՄՆ Ազգային պաշտպանութեան բիւրոյի պետ, զորավար Տանիէլ Հոքանսընի, ԱՄՆ Եւրոպական հրամանատարութեան ռազմավարութեան, ծրագրաւորման եւ քաղաքականութեան հարցերով տնօրէն, զորավար-մայոր Տանիէլ Լասիքայի եւ Քանգաս նահանգի ատյուրանթ զորավար, Ազգային պաշտ-

պանութեան հրամանատար, զորավար Մայքըլ Վենետիի հետ:

Հանդիպումներու ընթացքին քննարկուած են նահանգային գործընկերութեան շրջանակներուն մէջ Հայաստան-Քանգաս համագործակցութեան ներկայ մակարդակը եւ զարգացման հեռանկարները, ԱՄՆ-ի հետ երկկողմ համագործակցութեան առնչուող շարք մը հարցեր:

Նոյն օրը զորավար-լեյթենանթ Էտուարտ Ասրեանը հանդիպում ունեցած է նաեւ Կիրլոսի պաշտպանութեան նախարար Միխայիլ Կիրիկալասի եւ Ազգային պաշտպանութեան գլխաւոր շտաբի պետ, զորավար-լեյթենանթ Տիմոքրի թոս Զերվաքիսի հետ: Քննարկուած են երկկողմ համագործակցութեան առնչուող շարք մը հարցեր:

Արցախի Նախագահը Նստացոյց Կը Ակսի

Շարունակուած էջ 1-էն

խաղրութեան գործունէութեան ծաւալների խստիւ կրճատում, ջրի ու կապի ենթակառուցուածքների շարունակական խափանումներ, հիւանդանոցների, հացի արտադրամասերի ու այլ կենսական կառուցների աշխատանքի խափանումներ՝ երկտրամատակարարման այլընտրանքային լուծումների բացակայութեան պատճառով, երեխաների, յղիների ու այլ խոցելի խմբերի թերսնուցում, հարկւրուոր բաժանուած ընտանիքներ եւ այլն, եւ այլն: Մի քանի օրուայ մէջ այս վիճակը շատ աւելի սուր է դառնալու՝ իր բոլոր անդառնալի հետեւանքներով հանդերձ:

«Այս ողջ ընթացքում Արցախի Հանրապետութեան իշխանութիւնների կողմից բազմաթիւ միջոցներ են ձեռնարկուել թէ՛ միջազգային հարթակներում եւ թէ՛ տեղում՝ ապահովելու համար պատշաճ դիմադրութիւն ատրպէյճանական ոտնձգութիւններին: Դրանց հիմնական մասը տեսանելի չէ՝ հաշուի առնելով տարբեր գաղափարներ, եւ նաեւ այդ ջանքերի շնորհիւ ենք կարողացել այսքան ժամանակ դիմակայել շրջափակման ծանր մարտահրաւրներին:

«Հաշուի առնելով առկայ ծանրագոյն իրավիճակն ու վերա-

հաս մարդասիրական ու անվտանգային աղէտը՝ ես որոշել եմ դիմել ծալրայեղ միջոցի, այն է՝ հէնց այս պահից Ստեփանակերտի վերածննդի հրապարակում միանալ բազմաթիւ քաղաքացիների կողմից մեկնարկած նստացոյցին: Սա լրացուցիչ ճիգ ու ահազանգ է միջազգային գործնական ուշադրութիւն գրաւելու, չորդորելու միջազգային հանրութեանը կատարել իր ստանձնած պարտաւորութիւնները, մղելու հայ ժողովրդին եւ մեր բոլոր բարեկամներին աշխոյժ ու անյապաղ գործողութիւնների:

«Այս նստացոյցով մենք ակնկալում ենք, որ Հայաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Եւրոմիութիւնը, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդն ու այլ լիազոր մարմիններ, ինչպէս նաեւ բոլոր մնացած առնչուող դերակատարները գերծ կը մնան առաջին հերթին Ատրպէյճանի հետագայ յարձակողական ու յանցաւոր գործողութիւնները խրախուսելուց ու անտեսելուց, իսկ այնուհետեւ՝ կը կատարեն իրենց պարտաւորութեան, ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի հրամանները եւ միջազգային այլ որոշումների ու պայմանաւորութիւնների պատշաճ կատարման ուղղութեամբ»:

2եր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

«Փրկենք Մեղուներին» Վաւերագրական Ֆիլմի Անդրանիկ Ցուցադրուիւնը



Հակառակ ամրան տօթին՝ Յուլիսի 14-ին ընտրանի բազմութիւն մը փութացած էր Կլեմէնտի Իրանահայ Միութեան հանդիսարանը, ուր տեղի ունեցաւ երեկոյթ նուիրուած Փրոֆ. Գագիկ Յարութիւնեանի եւ անոր լոյս ընծայած «Մեղունահասարակութեան առեղծոածը» («The Mystery of The Honey Bee Society») գիրքի շնորհանդէսը:

Սոյն միջոցառումին ներկայ էին Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Լոս Անճելոսի Հայաստանի նախկին հիւպատոսներ՝ Արմէն Բայրուբեգյան եւ Արմէն Մելգոնեան, ՍԴՀԿ Վարիչ Մարմնի ատենապետ Վազգէն Խոտանեան, ինչպէս նաեւ մասնուրի եւ տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Կազմակերպիչ յանձնախումբի եւ Իրանահայ Միութեան անունով, ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ օրուան հանդիսավար՝ Թոմիկ Ալեքսանեան եւ դրուատանքով արտայայտուեցաւ հայրենի ծանօթ անձնաւորութիւններէն՝ Փրոֆ. Գ. Յարութիւնեանի տասնեակ տարիներու գիտա-հասարակական ծառայութիւններու եւ վաստակին մասին:

Սրտի խօսքով հանդէս գալով առաջնորդ Յովնան Սրբազան բնութագրեց Փրոֆ. Գագիկ Յարութիւնեանի աշխատանքային առանձնապատկերները ան նշեց... «Բացառիկ առաքելութիւններ կատարած սիրուած եւ յարգուած անձնաւորութիւն մըն է, նուիրեալ զաւակը մեր ազգին ու հայրենիքին, իսկ այսօրուան երախտագրութեամբ՝ իր սէրն ու պաշտամունքն է հողին ու բնութեան նկատմամբ, քանի որ երկինք ու երկիր կ'օրհնեն Աստուծոյ հրաշալիքները»: Ապա արեւշատ եւ քաջառողջ տարիներ մաղթեց յարգարժան հեղինակին:

Անուհետեւ շահեկան տեղեկութիւններով ելոյթ ունեցաւ Գ. Յարութիւնեան եւ բնութագրեց մեղուներու մասին իր կատարած հետազոտութիւններու կարեւորութիւնն ու ոչ ցանկալի իրողութիւնները: Նախ շեշտեց մեղուներու հաւաքական եւ միացեալ ներդաշնակ կեանքն ու համակարգուած աշխատանքը, որ իմաստնացած է եւ վերածուած առեղծոածային

հասարակութեան մը, որ ունի 100միլիոն տարուան պատմութիւն: Մեր հասարակութիւնն ալ պէտք է օրինակ առնէ մեղուներու հաւաքական միասնականութենէն...:

Փրոֆ. Գ. Յարութիւնեան անհաշուելի տարուէ տարի արձանագրուող զգալի նահանջի մասին: Արդարեւ, թէ համաշխարհային մակարդակով եւ թէ մասնաւորաբար ԱՄՆ-ի մէջ, ցուցանիշները յուսադրիչ ըլլալէ հետո եւ: Քանի որ մեղրի արտադրութիւնը նուազած է 40 տոկոսով: Այս կապակցութեամբ՝ մասնագէտները մօտէն շահագրքուած են մեղուի, մեղրի քանակի եւ որակի բարձրացման անհրաժեշտութեամբ: Իր կարծիքով եթէ մեղուները ոչնչանան, մարդկութիւնը ապրելու շատ կարճատեւ ժամանակ մը կ'ոնենայ...: Գալով, մեղրի ժամանակակից արտադրութեանը եւ որակին՝ անոնցմէ 2% իսկական են (organic) 98% ոչ օրկանային...: Նշենք նաեւ որ Գ. Յարութիւնեան ունի 50 այլազան նիւթերով մենագրութիւններ, որոնցմէ երկուքը նուիրուած են բնութեան:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին «Փրկենք Մեղուներին» ինքնեւ փրկելու ակնկալիքով՝ վաւերագրական ֆիլմը, որուն համաշխարհային անդրանիկ ցուցադրութիւնն էր: Սոյն շահեկան ֆիլմին մէջ մեղուներու եւ մեղունաբուծութեան արժեւորում կատարեցին եւ յատուկ մեկնաբանութիւններով ելոյթներ ունեցան տարբեր երկիրներու համբաւուր գիտնականներ եւ մասնագէտներ:

Աւարտին՝ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, որուն ընթացքին ներկաներն առիթն ունեցան շնորհակալութիւն փրոֆ. Գ. Յարութիւնեանը եւ զնելու իր նոր հրատարակած «Մեղունահասարակութեան Ստեղծումը» 423 էջերէ բաղկացած երկրէզու հատորէն օրինակներ:

Իր տեսակին մէջ բաճրամակարդակ միջոցառում մըն էր, որուն համար կը շնորհակալուեմք կազմակերպիչները:

Գ. Մ.

Արցախի Նախագահի Յուսահատական Քայլը

Շարունակուած էջ 1-էն

ղային ամբողջականութիւնը եւ աւելին կողմնակից էր «Ձանգեզուրի միջանցքի» գաղափարին, որ կտրականապէս մերժուեցաւ Յայաստանի կողմէ: Երկրորդ, Ռուսաստան սկիզբէն իսկ թերացաւ կատարելէ 44-օրեայ պատերազմին աւարտին ստորագրուած եռակողմ համաձայնութեամբ իր ստանձնած պարտաւորութիւնները: Երբ Ատրպէյճան կը յառաջանար խաղաղապահներու գօտիէն ներս, Ռուսական կողմը չկարողացաւ համապատասխան քայլերու դիմել: Երբ «բնապահպանները» փակեցին ճանապարհը, խաղաղապահները դարձեալ ջանք չըրին հեռացնելու զանոնք: Երբ, Ատրպէյճան անցալետ գետեղեց Լաչինի մուտքին, դարձեալ նոյն անգործութիւնը: Յետեւաբար, պատասխանատուութիւնը իր վրայէն հեռացնելով Ռուսաստան կը փաստէ որ, ի վիճակի չէ պաշտպանելու իր շահերը կովկասեան տարածաշրջանէն ներս, իսկ Թուրքիան դարձած է կարեւոր դերակատար եւ այսօր նախագահ Երտողան ինքնիրեն իրաւունք կը վերապահէ ըսելու որ, «2025 թուականին ռուս խաղաղապահները պէտք է հեռանան Ատրպէյճանի Ղարաբաղի շրջանէն»: Այս նոյն Թուրքիան, մի քանի օր առաջ, Ռուսաստանի հետ իր սիրային յարաբերութիւններուն դաւաճանելով մեկնեցաւ ՆԱԹՕ-ի զագաթաժողովին, ուր ամբողջապէս դիմափոխուելով՝ հաւատարմութիւն յայտնեց Արեւմուտքին եւ վերցուց Շուլտի անդամակցութեան դէմ դրած իր վեթոն ու խոստացաւ «Պայրաքտարներու» գործարան կառուցել Ուրբանիոյ մէջ: Յետեւաբար, Արցախի ժողովուրդի դիմագրուած դժուար

րութիւններու պատասխանատուութիւնը կը ծանրանայ առաջին հերթին Ռուսաստանի վրայ եւ ոչ թէ Յայաստանի:

նելու համար կը դիմէին պահակատուն, ուր ոմանք Հհասած վայր կ'իյնային հայի գէնքէ վիրաւոր կամ սպանալ: Հայերը բաւական վնաս պատճառեցին թիւրք զինուորներուն, որոնցմէ առաջժմ, թէեւ հաստատ տեղեկութիւնք ղեռ կը պակսին, սակայն 5-6 սպանուած եւ բազմաթիւ վիրաւորուած են:

Մի բարձրաստիճան թիւրք սպայ, որը ձիով նոր հասած էր կուռջ վայրը, մահացու կերպով կը վիրաւորուի: Կարապետ անուն հայ լրտես, որ իր արհեստին մէջ այստեղ մեծ դեր կը խաղար եւ շատ հայերու աչքը տնկած կար անոր վրայ, կուռին մէջ կը սպանուի: Հայերն ալ թիւրքերուն չափ սպանուած ունեն եւ բաւական վիրաւորեալներ: Բազմաթիւ ձեռքակալութիւնք կան հայոցմէ, վանցիլ, մշեցիլ, սեբաստացի եւ ռոտոսթոցիլ, գրեթէ ամէնք բանող դասակարգէն. կան նաեւ շատեր ո'չ բանող դասակարգէն եւ Կ. Պոլսոյ կրթուած շրջաններուն պատկանեալք: Կ'ըսուի թէ ձեռքակալեալներուն անուններն ամենէ առաջ եւրոպական հիւպատոսարանի անձանց ձեռամբ կը գրուին եղեր եւ յետոյ ոստիկա-


նատան: Ժամի մը չափ տեւեց այդ կռիւը, որոյ տեսքը սարսափելի էր: Առաջին անգամ էր, որ մայրաքաղաքի մէջ ոստիկաններու եւ զօրքին հետ հայերն այդպիսի արիւնահեղ կռիւ կ'ունենային զինուորութեամբ: Միայն նորանոր թիւրքական զօրքեր հասնելով, մեծ դժուարութեամբ հազիւ կարելի եղաւ ցրելու հայերի խմբերը: Սպանուածներն ու վիրաւորեալներն վերուցին տարին փողոցներէն: Գում-Գափուլն պաշարման վիճակի մէջ է. ոստիկանք ու զինուորք անդադար կը շրջեն փողոցներու մէջ: Մեծ եպարքոս Քեամիլ փաշա եւ ուրիշ փաշաներ, ամէն գործ մէկդի թողած, այսօրուան նշանաւոր դէպքի առիթով նիստեր կ'ընեն: Սուլթանը եւ Բ. Դուռը շատ յուզուած եւ վախկոտ դրութեան մէջ կը գտնուին:

Հիւսիսային քաղաքներն եւ Դեսպանատանց պաշտօնեայք այսօր խմբովին Բ. Դուռը երթալով տեսակցութիւններ ունեցան մեծ եպարքոսին հետ: Չնայելով որ այսօրուէ սկսեալ

Շար.ը էջ 15

DADUR TRAVEL

Blessing of Holy Oil at Etchmiadzin 2023



Guided Trip Led by Norayr Daduryan

AUTUMN TRIP TO ARMENIA
SEPT 25 - OCT 5

Trip Includes

- Roundtrip airfare from LAX via Lufthansa Airlines
- Transportation in Armenia
- Hotel accommodation at Marriott Hotel (double occupancy)
- Single Occupancy available for an additional \$600
- 6 lunches/2 dinners
- Entrance fee to all sightseeing destinations

\$3,099 per person with flight

\$1,699 per person land only

Book Now
(626) 660-9443
norayrdaduryan@gmail.com

Միսաք Մանուչեանի Պանթոնականացումը՝ Պատմական Նոր Էջ Մը Ֆրանսայի Եւ Հայութեան Համար



Միսաք եւ Մելինէ Մանուչեան

ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մաքրոնի որոշումով, Բ. աշխարհամարտի Ֆրանսական Դիմադրութեան շարժման հերոսներէն Միսաք Մանուչեանի աճիւնը 21 Փետրուար 2024-ին d'Ivry-sur-Seine-ի գերեզմանատունէն կը տեղափոխուի ու կը վերամփոփուի Փարիզի պանթէոնին մէջ: Ֆրանսացիք այս արարքը կը կոչեն «պանթէոնականացում», որուն կ'արժանանան ֆրանսացի մեծերը: Փարիզի պանթէոնին մէջ արդէն կը հանգչին Պոտլէրի, Վիքթոր Հիլկոյի, Ժան-Ժաք Ռուսոյի, Էմիլ Զոլայի եւ Մարի Բիւրիի նման մեծեր: «Պանթէոնականացում» շնորհելու իրաւունք ունին միայն Ֆրանսայի նախագահները:

Միսաք Մանուչեան առաջին գաղթական, առաջին հայ եւ առաջին համայնավար ֆրանսացին է, որ կ'արժանանայ նման պատիւի: Նոյն պանթէոնին մէջ կը վե-

1908-ին (անորոշ է) , Ատիաման, արեւմտեան Հայաստան: Մանուչեանի հայրը կը սպանուի 1915-ի ցեղասպանութեան ժամանակ, իսկ մայրը կը մահանայ գաղթի ճաբուն վրայ: Միսաք եւ երկու եղբայրները կը վերապրին: Միսաքը նախ կը գտնուի ձիւղկի որբանոցը, ապա կը միանայ եղբորը՝ Կարապետին Ժիւնիի Հայ Ազգային որբանոցը, որ կ'ըլլայ երկու եղբայրներուն կրթութեան առաջին օթեանը: 1925-ին կը տեղափոխուի Ֆրանսա, սկիզբը Մարսէյ, ապա՝ Փարիզ: 1930-ին Սեմայի հետ կը հրատարակէ «Ջանք» գրական ամսագիրը: Կ'աշխատի Սիթրոնէն գործարանին մէջ: 1937-ին, կը հրատարակէ «Ջանգու» շաբաթաթերթը, ուր կը գրէ բանաստեղծութիւններ: Կնոջը՝ Մելինէ Մանուչեանի հետ կը մասնակցի գերմանացիներու դէմ ֆրանսական ընդդաճակեաց ղիմադրութեան շարժումին: 1943-ին Մանուչեանի գլխավորած խումբը յարձակումներ կը գործէ գերմա-



ՅՅ Կաթն՝ ԿԵ ԵՍԻ՝ ԻՇԿ՝ ԿԻՅ՝ ԻՅՅ՝ ճաթ՝ 1944-57

րամփոփուին նաեւ աճիւնները Մանուչեանի կնոջ՝ Մելինէի (առանց «պանթէոնականացուելու» սակայն), որ նոյնպէս մաս կազմած է գերմանացիներու դէմ ֆրանսական ընդդաճակեաց ղիմադրութեան: Նախագահ Մաքրոնի այս որոշումը պաշտօնապէս յայտարարուեցաւ 18 Յունիս 2023-ին: Արարողութիւնը տեղի պիտի ունենայ 21 Փետրուար 2024-ին՝ Մանուչեանի եւ ընկերներուն գնդակահարութենէն 80 տարի ետք, ճիշդ նոյն օրը: Հայ բանաստեղծ, ֆրանսական ղիմադրութեան շարժման մարտիկ, համայնավար կուսակցութեան անդամ եւ Ֆրանսայի ազգային հերոս Միսաք Գեորգ Մանուչեան ծնած է 1 Սեպտեմբեր 1906-ին կամ

նական բռնագրաւող ուժերուն դէմ: 1943 Նոյեմբերին, Մանուչեան կը ձերբակալուի եւ տանջանքներու կ'ենթարկուի, ապա իր խումբին 21 անդամներուն հետ մահապատիժի կ'ենթարկուի: Յետ մահու, Մանուչեան կը պարգևատրուի Պատուոյ Լեգէոն շքանշանով: Մանուչեանի եւ իր խումբին անունով անուանուած են փողոցներ եւ հրապարակներ Փարիզի, Մարսէյի, Վալանսի եւ Երեւանի մէջ: Այս օրերուն Փարիզէն յատուկ այցելութեամբ Լիբանան կը գտնուի Միսաք Մանուչեանի կնոջ Մելինէի քրոջ՝ Արմէնուհիին թոռը՝ Քաթիա Կիրակոսեան: Ան Լիբանան կը գտնուի Մանուչեանի մասին վաւերագրական ժապաւէնի մը պատ-

րաստութեան ծիրէն ներս՝ նկատի ունենալով, որ Միսաք ու եղբայրները՝ Հայկ ու Կարապետ, երեքը՝ ցեղասպանութենէն ճողոպրած մանուկներ ջարդէն ետք որոշ ատեն գտնուած են ձիւղկի եւ Ժիւնիի որբանոցները:

Քաթիա Կիրակոսեանի հետ մեր հանդիպումը «ԳՈՀԱՐ» գրադարանին մէջ հանդիսացաւ առիթ մը, որ պահ մը փոխադրուինք Մանուչեանի ընտանեկան հարազատ աշխարհը: «Ես մանկութիւնս ապրած եմ Միսաքի պատմութիւններուն մթնոլորտին մէջ, մանաւանդ որ մեծ մայրս՝ Արմէնուհին եւ քոյրը՝ Մելինէն՝ Միսաքին կիրը մնայուն կը խօսէին իր մասին: Մելինէն մահացաւ 1989-ին: Մեծ մօրս բարեկամներէն կը լիջեմ Տիրան Ոսկերիչեանը եւ Ռուբէն Մելիքը: Կը հանդիպէի անոնց երբեմն, կը խօսէին Միսաքին մասին: Կամաց-կամաց այս պատմութիւնները դարձան կեանքիս առանցքը եւ ընտանիքս դարձաւ իմ դիցաբանական աշխարհը, իսկ Միսաքն ու Մելինէն իմ կուռքերս», հպարտու-

նախումբին, որ խնդրագիր պիտի ներկայացնէ էլիզէ պալատ: Միտով ընդունեցի: Ասկէ քանի մը ամիս առաջ, մեզի կապուեցան էլիզէ պալատէն եւ հանդիպումի մը հրաւիրեցին նախագահ Մաքրոնի չիշատակումներու խորհրդական Պրոնսօ Բոժէ-Փէթիի հետ: Սոյն հանդիմումին մանրամասն խօսեցանք Միսաքի խորհրդանշած արժէքներուն, անոր ազատատենչութեան, մարդկայնութեան եւ համայնականութեան մասին եւ շեշտեցինք թէ ինչու կարելոր է անոր պանթէոնականացումը: Բնականօրէն, անոնք ընդունեցին: Մեզի հրաւիրեցին երկրորդ հանդիպումի մը՝ այս անգամ նախագահ Մաքրոնի հետ: Մէկ ժամ տեւած տեսակցութեան ընթացքին խօսեցանք Միսաքի եւ Մելինէի մասին: Այս տեսակցութեան յաջորդեց 18 Յունիսի նախագահական յայտարարութիւնը եւ Միսաքի պանթէոնականացման որոշումը՝ 21 Փետրուար 2024-ին»:

«Մեծ եղաւ մեր ուրախութիւնը Միսաքի եւ Մելինէի հա-



Քաթիա Կիրակոսեան

թեամբ սկսաւ պատմել Քաթիան: Մանուչեան ամուսին մասին իր ապրումները Քաթիա կը փորձէ շօշափել իրականութեան վերածել նախ երբ սինեմայի ուսանող իբրեւ գեկոյց կը պատրաստէ վաւերագրական իր առաջին ֆիլմը Միսաքին մասին, ապա 2006-ի Փարիզի մէջ կը կազմակերպէ ցուցահանդէս մը, որ մեծ ընդունելութեան կ'արժանանայ, մանաւանդ որ հոն ներկայացուած կ'ըլլան Մանուչեանի ընտանեկան արխիւներն ու անտիպ նամակները: «Missak» գիրքին հեղինակ Didier Daeninckx երբ մեր տունը այցելեց եւ հոն տեսաւ Միսաքի անտիպ արխիւները, ըսաւ. «Ալի պապայի քարայրն է այս արդեօք», նշեց Քաթիա:

մար, Ֆրանսայի համար եւ հայութեան համար: Առաջին անգամ ըլլալով գաղթական ֆրանսացի մը, հայ մը կը պանթէոնականացուէր: Բոլոր ֆրանսացիները, բոլոր հայերը, աշխարհի բոլոր ազատատենչերը պէտք է հպարտ զգան Միսաքով եւ Մելինէով: Ազգային խորհրդանիշեր են անոնք», ընդգծեց Քաթիա Կիրակոսեան:

2014-ին, Բ. աշխարհամարտին գերմանացիներու կողմէ գնդակահարուած Մանուչեան խումբի նահատակութեան 70-ամեակին առիթով, երբ օրուան նախագահ Ֆրանսուա Հոլլանտ կը յայտարարէր իր կողմէ «պանթէոնականացում» ցանկին անունները, ի գարմանս բոլորին, ցանկէն կը բացակայէր Միսաք Մանուչեանի անունը: «Այս առիթով է որ խնդրագիրներու արշաւ մը սկսաւ էլիզէ պալատին ուղղութեամբ», դիտել տուաւ Քաթիա Կիրակոսեան եւ շարունակեց պատմել. «Երկու-երեք տարի առաջ ինծի կապուեցաւ Unite Laique կազմակերպութեան նախագահ Ճան-Փիլե Սաքունը եւ առաջարկեց՝ նկատի ունենալով, որ ես ուղղակի առնչակից եմ արշաւին, մաս կազմել այն յանձ-

ինչ կը վերաբերի վաւերագրական ժապաւէնի պատրաստութեան, Քաթիա Կիրակոսեան նշեց, որ շատոնց այդ ծրագիրը ունէր իր մտքին մէջ, բայց կը սպասէր յարմար ու պատեհ առիթին: Ան բացատրեց թէ ուրիշներ ալ ձեռնամուխ են նման ժապաւէնի պատրաստութեան, բայց «իմս ուրիշ պիտի ըլլայ, անձնականացումս պիտի ըլլայ, որովհետեւ ան նաեւ իմ ընտանիքիս պատմութիւնն է: Ես անոնց հետ հասակ առի: Անոնց նուիրումն ու նահատակութեան կամքը կը հոսին երակներուս մէջ», ըսաւ ան:

«Ես շատ հպարտ եմ Միսաքով եւ Մելինէով: Անոնք հաւատքով ընտրեցին իրենց ճամբան եւ երբեք չդաւաճանեցին իրենց սկզբունքներուն: Անոնք նոյնիսկ իրենց գաւակը գոհեցին ազատութեան բազինին, որովհետեւ Մելինէն չլի էր դիմադրութեան կռիւներուն ատեն եւ դժբախտաբար կորսնցուց իր գաւակը, բայց իրենց օրինակով, անոնք կտակ մը, աւանդ մը թողուցին բազմաթիւ զաւակներու՝ սիրելի ու ազատութիւնը եւ կուռքելու անոր սիրոյն», եզրափակեց Քաթիա Կիրակոսեան:

«Պատմութեան Հետ Պիտի Հաշտուիս, Որպէսզի Կեանքը Յառաջ Երթայ»

ԴՈՎՏ. ՀՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

26 Յունիսին 2 յուլիս 2023, Իրլանտայի Հանրապետութիւն: Երկիր մը, որ օժտուած է Աստուծոյ ստեղծած գեղեցիկ բնութեամբ: Հոն, ուր կանաչ գոյնը կը տեսնես ամէն տեղ: Անձրեւոտ կլիման երկիրը եւ անոր բնութիւնը վերածած է գեղեցիկ կանաչի: Բայց երկրին բնութեան հետ կայ ժողովուրդին ժպիտը եւ անոր բարեկամական ու հաղորդակցութեան ջերմ հոգին: Իրլանտան այնպիսի երկիր մըն է, ուր շատ յաճախ անծանօթ կրնայ դառնալ ծանօթ եւ օտարը ինքզինք կրնայ զգալ հարազատ:

Այս մթնոլորտին մէջ էր, որ ուզեցի տեսնել եւ վայելել երկրին բնութիւնը: Զբօսաշրջական ընկերութեան մը կազմակերպած պտուղտին մասնակցեցայ տեսնելու համար երկիրը իր ամբողջութեան մէջ:

Իրլանտացի վարորդը ունէր պատմելու յատուկ կարողութիւն: Եթէ մէկ կողմէ կար իր գուարթ բնաւորութիւնը, միւս կողմէ կար նաեւ գիտելիքներու եւ պատմական տուեալներու իր պաշարը: Ան ներկայացուց երկրին պատմութիւնը՝ առարկայական եւ գիտական հիմքերով, հեռու՝ զգացական մօտեցումներէ: «Իրլանտան աւելի քան ութ հարիւր տարի մնացած է անգլիական գաղութատիրութեան տակ: Երկրին պատմական այս ժամանակահատուածը դժուար եղած է», ըսաւ ան: «Անգլիացիք իրենց հոգածութեան եւ սեփականութեան տակ առին երկրին բնական հարստութիւնը, մինչեւ որ վրայ հասաւ 1850-ի սովը», շարունակեց ան:

Իրլանտայի սովը ծանր հետեւանք ունեցած է երկրին վրայ: Մահացած է աւելի քան մէկ միլիոն իրլանտացի: Սովը պատճառ եղած է նաեւ մօտաւորապէս չորս միլիոն իրլանտացիներու գաղթին: Այս իմաստով, իրլանտական գաղութներ կարելի է տեսնել Ամերիկայի եւ Եւրոպայի տարբեր քաղաքներուն մէջ:

«Սովին պատճառ բնութեան աղէտը չէր միայն, վարորդն է դարձեալ: Անգլիական գաղութատիրութեան ժամանակ երկրին հարստութեան սեփականաշնորհումը եւ շարաշահութիւնը մեծ դեր ունեցած են սովի տարածման մէջ: Այդ պատճառով ալ բազմաթիւ իրլանտացիներ պատմութեան այս աղէտը կը նկատեն ցեղասպանութիւն՝ գործադրուած իրլանտացի ժողովուրդին դէմ»:

Վարորդի դէմքին վրայ չկար զգացական արտայայտութիւն: Ան հարազատօրէն կը ներկայացնէր իր երկրին պատմութիւնը: Կարելի չէր ինծի համար ցեղասպանութեան իրականութեան վրային աննկատ անցնիլ: Եւ չուշացաւ հարցումս վարորդին. «Ինչպէ՞ս կը նայիս պատմութեանդ այդ ժամանակահատուածին»:

«Պատմութեան հետ պիտի հաշտուիս, որպէսզի կեանքդ յառաջ երթայ», ըսաւ վարորդը:

Հաշտուի՞լ: Այս մտածումներուն եւ մտորումներուն մէջէն սկսայ մտնել իրլանտացի հայկական իրականութեան մէջ: Դոկտ. Փոլ Մանուկ Տիշէքէնեան եկած է իրաքէն: Ան մասնագիտութեամբ ճարտարապետ է: Փոլ ունի համակ սէր՝ հայութեան եւ Հայաստանի նկատմամբ: Աշխա-

տանք տարած է գաղութի հայութեան հետ համատեղ, որ իրլանտայի մայրաքաղաք Տապլինի Քրիստոսի եկեղեցի-քաթեդրալի բակին մէջ տեղադրուի հայկական խաչքար մը: Ան բացատրեց եւ ցոյց տուաւ խաչքարի ճարտարապետական եւ մշակութային գիծերը, եւ թէ ինչպէ՞ս հայկական եւ իրլանտական յատկանիշները միացած են խաչքարին մէջ: «Մեր նպատակը հայ-իրլանտական բարեկամութեան խորհրդանիշ մը գետեղել էր: Ուզեցինք շեշտել Յեղասպանութեան զոհերուն յիշատակը եւ իրլանտացի հետ մեր բարեկամութիւնը», ըսաւ Փոլ:

Քրիստոսի եկեղեցին պատմամշակութային գեղեցիկ իրագործում մըն է: Հիմնուած է 1030 թուականին եւ տարին աւելի քան հինգ հարիւր հազար այցելուներ ունի: «Շատ են այցելուները, որոնք կու գան եւ ծաղիկներ կը գետեղեն խաչքարին առջեւ՝ իբրեւ յարգանքի արտայայտութիւն», ըսաւ Փոլ:

Փոլ Մանուկ Չատագովն է հայրենիքի բարգաւաճման: Արդէն ունի տուն մը Երեւան եւ տարին քանի մը ամիս Հայաստան կ'ապրի: «Շատ բարեկամներ ունիմ Հայաստան եւ կը մասնակցիմ բարեսիրական ծրագիրներու՝ Հայաստանի եւ Արցախի համար»: Փոլի դէմքին վրայ գծուեցաւ ժպիտ եւ գոհունակութիւն: Բայց անպայմանօրէն նաեւ՝ հպարտութիւն: «Կը սիրեմ Հայաստանը», ըսաւ ան:

Այտա Սարաֆեանը եկած է Պաղտատէն: Ան երկար տարիներ աշխատած է Միացեալ Ազգերու կազմակերպութեան հետ եւ այս շրջագիրն մէջ ձամբորդած է բազմաթիւ երկիրներ, մինչեւ որ հաստատուած է Տապլին: «Ո՛ւր որ գացի եւ ո՛ւր որ կ'երթամ, հայը կը փնտռեմ», ըսաւ Այտա: - Հայութիւնը ամբողջ էութիւնս է»: Այտան չի բաւարարուիր միայն հայը փնտռելով: «Հայը իր գործով պէտք է մէջտեղ գայ», կը հաւատայ Այտան:

Այտան աշխուժ մասնակցութիւն ունի իրլանտացի մէջ հայկական կեանքը կազմակերպելու աշխատանքին մէջ: Ան ատենապետն է եկեղեցւոյ վարչական ժողովին, որ մէկ մասնիկն է Միացեալ Թագաւորութեան հայկական առաջնորդարանին: «Յովակիմ եպ. Մանուկեան տարին քանի մը անգամ կ'այցելէ Տապլին, եւ պատարագ կը մատուցուի այստեղ», ըսաւ Այտան:

Գաղութը կը հաշուէ մօտաւորապէս հինգ հարիւր հայորդիներ: Մեծամասնութիւնը եկած է Հայաստանէն, նաեւ կան իրաքէն, Սուրիայէն եւ քանի մը հոգի նաեւ Լիբանանէն: «2009-ին հիմնեցինք հայկական շաբաթօրեայ վարժարանը, որպէսզի հայ նոր սերունդը հայերէն սորվի: Ներկայիս ունինք 13 աշակերտներ», ըսաւ Այտա:

Մարգրիտ Սարաֆեան Այտային քոյրն է: «Մայրս շատ կարեւոր դեր ունեցաւ մեզի հայերէն սորվեցնելուն մէջ», ըսաւ Մարգրիտ: Սարաֆեաններուն մայրը եղած է լիբանանահայ, որուն մէջ դարբնուած է հայկական ամուր նկարագիր, եւ ան իր երեք դուստրերուն մէջ դրած է հայեցի ինքնութեան ամուր հիմք:

«Միայն լեզուն սորվիլը չի բաւեր, Մարգրիտն է դարձեալ, հոգին ալ պէտք է»: Հոգին պահելու համար պէտք եղած է քրիստոնէա-

կան դաստիարակութիւնը եւ անոր սնունդը: «Ուզեցինք եկեղեցի երթալ, որպէսզի մեր հաւատքը պահենք: Իրլանտայի մէջ հայկական եկեղեցի չկար: Ստիպուած էինք եզրպտական եկեղեցի երթալ, որպէսզի մեր քրիստոնէական հաւատքը պահենք եւ զօրացնենք»:

Մարգրիտին մէջ կը տեսնէի քրիստոնէական հաւատքի կարեւորութիւնը՝ մարդկային կեանքին եւ հաւաքականութեան համար: «Ես իրլանտա եկայ հաւատքով եւ այդ հաւատքի տունը փնտռեցի, քանի որ հայկական տան մը մէջ մեծցած եմ: Հաւատքս հայկական է եւ զօրաւոր», ըսաւ Մարգրիտ: Մարգրիտ կը հետեւի Աստուածաշունչի առցանց սերտողութեան՝ պահելու համար իր հայկական ամուր հաւատքը:

Լիւսի Սարաֆեանը Այտային եւ Մարգրիտին քոյրն է: «Ես հայկական դպրոց չգացի իրաքի մէջ, որովհետեւ դպրոցը լեցուն էր, եւ ինծի համար տեղ չէր մնացած հոն: Մայրս ինծի հայերէն սորվեցուց: Ինծի շատ աղուոր պատմութիւններ ալ կը պատմէր», ըսաւ Լիւսի:

Սարաֆեան ընտանիքին հայկական ուղեւորութիւնը սկսած էր Գոնիայէն եւ հասած Պաղտատ՝ Յեղասպանութենէ ետք: Կը զրուցէի ընտանիքի մը հետ, որ դարձեալ տեղափոխուած էր իր «տունէն»՝ իրաքէն, եւ հասած «նոր տունը»՝ Իրլանտա:

Զոհրապ Մարտիրոսեանը Հալէպէն դուրս եկած է երիտասարդ տարիքին: Երկար ժամանակ ապրած է Գերմանիա եւ 2006-էն սկսեալ կ'ապրի Իրլանտա: Ամուսնացած է Լիւսիին հետ եւ կազմած՝ հայկական ընտանիք: Զոհրապը տոկուն հայն է՝ «երազային Հայէպ»-ի գաւազը: Կարծես տակաւին երէկ էր, որ Զոհրապ ձգած էր իր շատ սիրած քաղաքը: «Ես հայ եմ: Ինչո՞ւ պէտք է փոխուիմ», ըսաւ Զոհրապ:

Զոհրապին համար հայը եւ բարեկամութիւնը շատ կարեւոր գրաւականներ են: «Այս այցելութիւնդ չեմ հաշուեր», ըսաւ Զոհ-



րապ՝ աւելցնելով. «Յաջորդ անգամ մեր տունը կը մնաս»: Զոհրապ հալէպահայն է, ջերմ, հարազատ, որ չէ փոխուած:

Այտան, Մարգրիտը եւ Լիւսիներ Յեղասպանութենէ ճողոպրած երրորդ սերունդի հայեր են: Անոնք չեն ապրած Յեղասպանութիւնը, բայց ինչպէս իւրաքանչիւր հայ՝ կը շարունակեն անոր ցաւը: «Յեղասպանութիւնը շատ ցաւալի է, Այտան է խօսողը: - Մեծ մայրս կը պատմէր»: Երեք քոյրերը ապրած են Յեղասպանութիւնը՝ լսելով հայուն պատմութիւնը, ցաւալի պատմութիւնը: Եւ հաշտուած են:

Յեղասպանութեան պատմութեան հետ անոնք ապրած են նաեւ Հայաստանի իրականութիւնը: «Չափահաս էի, երբ առաջին անգամ Հայաստան գացի», ըսաւ Այտան: «Ձամբորդելէս առաջ շատ կարգացի եւ ուսումնասիրեցի հայրենիքին մասին», շարունակեց Այտան: Ուսումնասիրութեան հետ Այտան ապրած է նաեւ Յեղասպանութեան պատմութիւնը՝ արցունքը աչքերուն: Ան ըսաւ. «Նոր ցեղասպանութիւն ապրեցայ»:

Այտայի համար հայրենիքը տեսնելը եւ ծանօթանալը այդքան ալ դիւրին չէ եղած: «Արաբական մշակույթս հետս բերած էի Հայաստան եւ տեսայ, որ հայ ենք, բայց տարբերութիւններ կան»: Բայց անպայմանօրէն կայ միացող օղակը: «Ծիծեռնակաբերդը եւ Ս. էջմիածնի տաճարը միացուցին գիս հայրենի հողին հետ», ըսաւ Այտան:

Շար.ը էջ 15

Համալսարան
ՆԱՅԻՐԻ
Ազգային - Գրական

ԾԱՆՈՒ Է

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ-Ի
1958 - 1975 թուականներու
Լրիւ Լաթակազմ Հաւաքածոները

Ցանկացողներէն կը խնդրուի հետաձայնել հետեւեալ թիւին

626-354-5924

ԱՅԱԸ-ի Արցախի Մանկապարտեզներու Ամապերջի Հանդիսութիւններ



Ճանապարհան Մանկապարտեզ, Մարտակերտ

Ամերիկայի Հայ Աւետարան-
չական Ընկերակցութեան (ԱՀԱԸ)
Արցախի մանկապարտեզներն իրենց
գործունէութեան ընթացքում հա-
զարաւոր մանուկներ կը թողնեն
առաջին հանգրուանն են եղել,
որտեղ դրուել են կեանքի յաջորդ
փուլի համար անհրաժեշտ հիմքե-
րը: Դրանք գինեկ են մեր մանուկ-
ներին հայեցի դաստիարակու-
թեամբ, ճիշտ արժէհամակարգով,
լեզուատրամաբանական մտածողու-
թեամբ, շրջակայ միջավայրը ճիշտ
ընկալելու ունակութեամբ: Կրթո-
ճախներն իրենց նուիրական աշ-
խատանքը կատարել են համալա-
րակի, ռազմական դրութեան եւ
շրջափակման պայմաններում: Ինչ
խօսք, վերջինիս ծանրութիւնն առ
այսօր զգալի է... Հոսանքի եւ կազմի
պարբերական անջատումները, վա-
ռելիքի եւ սննդի բացակայու-
թիւնն ու պակասը մանկապարտե-
զի առօրեայ աշխատանքը դարձրել
են դժուար, բայց ո՛չ անհնարին:
Բոլորեց ուսումնական տարին
իր բնականոն հունով...

կապարտեզի աւագ խմբի սաների
«Հրաժեշտ մանկապարտեզին» խո-
րագրով տարեվերջեան աւարտա-
կան միջոցառումը տեղի ունեցաւ
Յունիսի 17, 2023-ին Մարտակեր-
տի մշակույթի եւ երիտասարդու-
թեան կեդրոնի դահլիճում:

Աւագ խմբի սաները հանդէս
եկան համերգային ծրագրով՝ աս-
մունքով, երաժշտական, պարային
համարներով՝ նուիրուած հայրե-
նիքին, մանկապարտեզին, դաստի-
արակներին, ծնողներին: Հնչեցին
շնորհակալական խօսքեր մանկա-
պարտեզի աշխատակիցներին նկատ-
մամբ՝ մայրաքար սիրելու, դաս-
տիարակելու, ջանք ու եռանդ չխնա-
յելու եւ ամէն օրը հեքիաթ դարձ-
նելու, երաժշտական ճաշակ զար-
գացնելու համար:

Աւարտական վկայականների
յանձնումից յետոյ աւագ խմբի սա-
ները զալիք սերնդին փոխանցեցին
խորհրդանշական բանալին, որը բա-
ցում է հրաշքների աշխարհ տանող
դուռը: Մանկապարտեզի տնօրէն
Գայեանէ Ալեքսանեանը եւս շնոր-



Պասմաճեան Մանկապարտեզ, Ասկերան

Այսպէս, ԱՀԱԸ-ի Մարտա-
կերտի, Ասկերանի եւ Ստեփանա-
կերտի մանկապարտեզների թուով
125 սաներ շրջափակման պայման-
ներում հրաժեշտ տուեցին հարա-
զատ կրթօճախներին՝ դպրոցի հա-
մար անհրաժեշտ գիտելիքների ու
կարողութիւնների պաշարով: Դա
փաստել են բոլոր մանկապարտեզ-
ներում անցկացուած հրաժեշտի
հանդիսաւոր ցերեկոյթները, որոնց
ընթացքում երեխաները երգեցին,
պարեցին, արտասանեցին...

Բարի աւանդոյթի համաձայն,
չնայած շրջափակման դժուարու-
թիւններին, Ընկերակցութիւնը բո-
լոր շրջանաւարտ մանուկներին ապա-
հովել է գրեթեական պիտոյքներով:

Ճանապարհան Մանկապարտեզ,
Մարտակերտ

Մարտակերտի վեր. Դոկտ.
Մովսէս Ճանապարհանի անուան ման-

հաւորեց երեխաներին, մաղթելով
բարի ճանապարհ, բարի երթ դէպի
նոր գիտելիքների աշխարհ:

Պաղտիկեան Մանկապարտեզ,
Ստեփանակերտ

Յունիսի 27, 2023-ին, Ստե-
փանակերտի Յակոբ եւ Լիտիա
Պաղտիկեանների անուան մանկա-
պարտեզում աւարտական հանդէս
էր: «Ապրենք, որ ապրի Արցա-
խը...» խորագիրը կրող միջոցա-
ռումը շուրջ 200 օր շրջափակման
մէջ գտնուող մանուկների ոսկե-
հիւս հեքիաթն էր խաղաղութեան,
բարութեան, ընկերութեան, Ար-
ցախի ու աշխարհի մանուկների
երազանքների մասին: Երեխաները
հանդէս եկան երգ ու պարով, աս-
մունքով ու բեմադրութեամբ: Թո-
թովախօս լեզուով երեխաներն իրենց
հաստատակամ որոշումը յայտնեցին
Արցախում ապրելու եւ մեր հայրե-

Սերկէյ Փարաճանովի 100-Ամեակը Ֆրանսայի Սէջ Կը Նշուի «ՆՈՒԱՆ ԳՈՅՆՐ» Պարային Բեմադրութեամբ



Հայազգի ֆիլմի բեմադրիչ,
սենարիստ եւ արուեստագէտ Սեր-
կէյ Փարաճանովի ծննդեան 100-
ամեակին առիթով իրականացուող
հայ-ֆրանսական նախագիծի ծի-
րին մէջ ֆրանսական շարք մը
թատրոններու մէջ պիտի ներկա-
յացուի «ՆՈՒԱՆ ԳՈՅՆՐ» պարային
բեմադրութիւնը:

Այս մասին յայտնեց նախագի-
ծի հեղինակ Սաթէկ Խաչատրեանը:
Ներկայացման առաջնախաղը պի-
տի կայանայ 18 եւ 19 Յունուար
2024 թուականին Տեսինի «Թոպո-
կան» թատրոնին մէջ, 26 Յունուար
ընդ Մոն տը Մարսանի «Կասքոն»
թատրոնին մէջ: Այն պիտի ցու-
ցադրուի նաեւ Երեւանի մէջ:

Խաչատրեան նշեց, որ Փարա-
ճանովի 100-ամեակին նուիրուած
հայ-ֆրանսական պարային ներկա-
յացման վրայ սկսած են աշխատիլ
2021 թուականին: Ան ընդգծեց, որ
փորձած են ներգրաւել ե՛ւ հայ, ե՛ւ
ֆրանսացի մասնագէտներ:

«Ինծի համար՝ իբրեւ հայ եւ
իբրեւ արուեստագէտ, շատ կարե-
ւոր էր, որ Փարաճանովի ստեղծա-
գործութիւնը ներկայացուի այլ
դիտանկիւնէ, հետեւաբար խորեկ-
րաֆ Մուրատ Մերգուքին է: Պա-
րողներէն 5-ը Ֆրանսայէն են, 2-ը՝
Երեւանէն: Խումբին միացած է
«Հող» խումբը, որուն վստահուած
է պարային ներկայացման երաժշ-
տական ստեղծագործութիւնը, եւ
էտկար Մանուկեանը, որ պիտի
ըլլայ ներկայացման հագուստնե-
րու ձեւաւորման հեղինակը», ըսաւ
Խաչատրեան:

Նախագիծի երկրորդ ստեղ-
ծագործական փուլը պիտի կայա-
նայ 23 Հոկտեմբերէն 4 Նոյեմբե-
րին, Ֆրանսայի Պրոն քաղաքի
«Փոլ-փիք» մշակութային կեդրո-
նին մէջ, հայ եւ ֆրանսացի ար-
ուեստագէտներու մասնակցու-
թեամբ:

Նախագիծի երրորդ եւ վեր-
ջին ստեղծագործական փուլը պի-
տի կայանայ 8-18 Յունուար 2024
թուականին, ֆրանսական Տեսին
քաղաքի «Թոպոկան» թատրոնին
մէջ, դարձեալ հայ եւ ֆրանսացի
արուեստագէտներու մասնակցու-

թեամբ:
«Ներկայացումը ունի ե՛ւ Հա-
յաստանի, ե՛ւ Ֆրանսայի աջակցու-
թիւնը, որ կը խօսի Ֆրանսայի մէջ
հայկական մշակույթը բարձր գնա-
հատելու, կարեւորելու եւ հայերը
արժեւորելու մասին: Սա կը փաս-
տէ, որ Ֆրանսան՝ մեր բարեկամ
երկիրը, մեր կողքին է ոչ միայն
դժուարին պահերուն, այլեւ մեր
մշակույթը հանրահռչակելու, մեզ
իր յարգանքը մատուցելու հար-
ցով», ըսաւ Սաթէկ Խաչատրեանը:
Ներկայացման խորեկրաֆ
Մուրատ Մերգուքին նշեց, որ իր
համար մեծ մարտահրաւէր է մեծ
արուեստագէտը ճիշդ ներկայաց-
նելը:

«Պարը համընդհանուր, հա-
մամարդկային լեզու ունի եւ ես
յոյս ունիմ, որ այս ներկայացումը
հնարաւորութիւն պիտի տայ այս
մեծ արուեստագէտին ստեղծագոր-
ծութիւնը ներկայացնելու ամբողջ
աշխարհին հասկանալի լեզուով:

Բնականաբար սա ներկայա-
ցում է, որ ներշնչուած պիտի ըլլայ
իրմէ, որոշ պարերով պիտի տես-
նեք նոյնինքն իր ձեռագիրը եւ ես
մեծ յոյս ունիմ, որ այս ներկայացու-
մէն յետոյ հանդիսատեսը ցանկու-
թիւն պիտի ունենայ ձանչնալու,
կամ, որոնք կը ձանչնան, աւելի լաւ
բացայայտելու Փարաճանովը եւ
անոր ստեղծագործութիւնները»,
նշեց Մերգուքին:

«ՆՈՒԱՆ ԳՈՅՆՐ» պարային բե-
մադրութիւնը կ'իրականացնեն
ֆրանսական «Սաթէկ-աթըր» թա-
տերական միութիւնը, «Փոլյան
Սցեն» կազմակերպութիւնը, «Ժո-
ղովրդական երաժշտութեան եւ պա-
րի ազգային կեդրոն»-ը եւ «Արթ-
իմաթ» մշակութային կազմակեր-
պութիւնը: Նախագիծին կ'աջակ-
ցին Հայաստանի կրթութեան, գի-
տութեան, մշակույթի եւ մարմ-
նակրթութեան նախարարութիւնը,
Հայաստանի մէջ ֆրանսական հիմ-
նարկը եւ Ֆրանսայի դեսպանա-
տունը, Տեսինի «Թոպոկան» եւ
Մոն տը Մարսանի «Կասքոն» թա-
տրոնները: Նախագիծին կ'աջակցին
նաեւ Երեւանի քաղաքապետարանը
եւ Լիոնի Մեթրոփոլը:

նիքը ապրեցնելու մասին:

Հանդէսի աւարտին մանուկ-
ներին բարի մաղթանքի խօսք ուղ-
ղեց մանկապարտեզի տնօրէն Նունէ
Բաբայեանը եւ երեխաներին յանձ-
նեց ընկերակցութեան տրամադ-
րած նուէր-փաթեթները՝ գրեթեա-
կան պարագաներով:

Պասմաճեան Մանկապարտեզ,
Ասկերան

Յունիսի 29, 2023-ին Եփրեմ
եւ Զապէլ Պասմաճեանների անուան

Ասկերանի մանկապարտեզի միջին
խմբի աւարտական հանդէսն էր:
Չնայած շրջափակմանն ու մարդա-
սիրական ճգնաժամին, ողջ անձնա-
կազմը, ծնողների հետ համատեղ
ուժերով, Աստուծոյ օգնութեամբ,
արեց անհնարին: Փոքրիկներն ու-
րախ տրամադրութեամբ ասմուն-
քեցին, երգեցին ու պարեցին:

«Նրանք են մեզ այսօր ապ-
րեցնում մեր հայրենիքում» Ասաց

Հատիս Լերան Վրայ Նոր Յայտնաբերուած Ամրոցի Պեղման Աշխատանքները



ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակուցի եւ սպորտի նախարար ժաննա Անդրէասեանն այցելել է ՀՀ կոտայքի մարզի Հատիս լեռան վրայ նոր յայտնաբերուած ամրոցի տարածք՝ ծանօթանալու իրականացուող պեղման աշխատանքներին: Նախարարին ուղեկցել են ԿԳՄՄՆ պատմութեան եւ մշակուցի յուշարձանների պահպանութեան վարչութեան պետ Յարութիւն Վանեանը եւ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» ՊՈԱԿ-ի տնօրէն Արմէն Յովհաննիսեանը:

Հատիս լեռան տարածքում պեղումները մեկնարկել են Յունիսի 1-ից. աշխատանքներն իրականացնում է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի հնագիտական արշաւա-

բացուած պատերի ամրակաշման եւ վերականգնման մասին», - ասել է նա:

Արշաւախմբի ղեկավարը՝ Արթուր Պետրոսեանը նախարարին ներկայացրել է պեղման աշխատանքի մանրամասները՝ սկսած ամրոցի տեղագրութիւնից. «Ամրոցը գտնուում է Հատիսի կոնաձեւ գագաթին: Հաշուի առնելով պեղման ենթակայ տարածքի խիստ ընդարձակ մակերեսը՝ «Հատիսի ամրոցի» հետազոտող տարածքը բաժանուել է 10x10 մ չափերով քառակուսիների»:

«Յիշեցնենք, որ այս պահին ձեռք բերուած տուեալները թոյլ են տալիս հնավայրը թուզրել պրոնզ երկաթեդարեան, անտիկ եւ միջնադարեան ժամանակաշրջաններով: Յայտնաբերուած հնագիտական գտածոների մէջ առանձնանում են տարբեր ժամանա-



խումբը, որի կազմում ընդգրկուած են հայ եւ իտալացի 6 հնագէտներ (ղեկավարներ՝ Արթուր Պետրոսեան եւ Ռոբերտո Դանն):

Ըստ աղբիւրի՝ ԿԳՄՄ նախարար ժաննա Անդրէասեանը հետաքրքրուել է աշխատանքների ընթացքով, մասնագէտներին հարցեր ուղղել գտածոների մասին: Նախարարն ընդգծել է, որ պեղումների ընթացքում մեծ աշխատանք է արուել՝ նկատելի արդիւնքներով եւ յոյս է յայտնել, որ աւարտն աւելի գոհացուցիչ կը լինի:

«Այս տարածքը եւ պեղումներից ձեռք բերուած իւրաքանչիւր գտածոյ մեր պատմական արժէքներն են, որոնք պահպանելու եւ զարգացնելու համար իւրաքանչիւրս մեծ անելիք ունենք: Կարծում եմ, պեղումների արդիւնքներն արդէն թոյլ են տալիս մտածելու ամրոցի եւ դրա նոր

կաշրջանների խեցանոթների օրինակներ, օբսիդիանից պրոնզեդարեան նետասլաքների օրինակներ, երկաթից նիզակի ծայր, տարբեր քարերից, երկաթից եւ պրոնզից պերճանքի առարկաներ, գլանաձեւ կնիք (հաւանաբար մ.թ.ա 5-րդ դար) եւ Ալեքսանդր Մեծի պատկերով արծաթեայ դրամը:

Հատիս լեռան վրայ պեղումները շարունակուում են. աւարտը նախատեսուում է Օգոստոսի վերջին:

Նշենք, որ պեղումներն իրականացուում են 2023 թ. Մարտ ամսին ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակուցի եւ սպորտի նախարարութեան ու «Գագիկ Ծառուկեան» բարեգործական հիմնադրամի միջեւ կնքուած յուշագրի հիման վրայ», - յայտնում են ՀՀ ԿԳՄՄ նախարարութիւնից:

Քոչարեանի Ջաւակները

Շարունակուած էջ 2-էն

գտնուող, ՀՀ ՀԼ-ի սեփականատէր Սամուէլ Մայրապետեանն է՝ 60 տոկոս (երկուսը միասին) ուղղակի մասնակցութեամբ:

«ԼԼ ԲԻՄԲՕ» ՍՊԸ-ում Ս. Քոչարեանն ունի 50 տոկոս ուղղակի մասնակցութիւն, միւս շահառուն՝ 50 տոկոս ուղղակի մասնակցութեամբ, Սերժ Սարգսեանի եղբորորդի Նարեկ Սարգսեանն է:

«ԱՐԹ ԲԻԼԴ» ՍՊԸ-ում էլ Ս. Քոչարեանն ունի 50 տոկոս ուղղակի մասնակցութիւն (նրա կինը՝ Չ. Պատալեանը, իրականացնում է փաստացի վերահսկողութիւն), միւս 50 տոկոս ուղղակի մասնակցութեամբ շահառուն էլ Գայեանէ Որսկանեանն է (Արամայիս Որսկանեանը նոյնպէս իրականացնում է փաստացի վերահսկողութիւն): Ս. Քոչարեանը 100 տոկոս ուղղակի մասնակցութիւն ունի նաեւ «Սթրիմ Ֆորս» ՍՊԸ-ում: Օտարահունչ անուանումներով այս ընկերութիւններում Քոչարեանի զաւակները շահառուներ են դարձել այն շրջանում, երբ նրանց հայրիկը ՀՀ

նախագահն էր եւ Արցախի հարցով գլխաւոր բանակցողը:

Թէ քանի տոննա հալալ քրտինք են թափել Քոչարեանները նման ունեցուածք ձեռք գցելու համար՝ ասել չենք կարող, իրաւապահների տիրոջ մտնել չենք ցանկանում: Յիշեցնենք միայն, որ «Հայաստան» դաշինքի անդամ Իշխան Սաղաթեյեանը մէկ տարի առաջ այս օրերին ծաւալուող «Դիմադրութիւն» շարժման հանրահաւաքներից մէկի ժամանակ խոստանում էր իշխանութիւնից յետոյ «թաւանը հետ բերել»: Դաշնակցական գործչին իհարկէ չյաջողուեց հասնել իր նպատակին՝ իշխանափոխութեան, սակայն նրա փափաքը՝ թաւանը հետ բերելու մասով, կարող է իրականանալ: Այնպէս որ, պարոն Սաղաթեյեանը կարող է հետեւել պատկան մարմինների կողմից իրականացուելիք «թաւանազանձման» գործընթացին եւ հետեւութիւններ անել՝ ովքեր են թաւանչիւներն ու ինչու են ուզում կրկին իշխանութեան գալ:

Հ. Մ.
«ՍԻՎԻՔ»

Գում-Գափուի Յոյրը. 15 Յուլիս, 1890թ.

Շարունակուած էջ 11-էն

4 օր թիւրքաց Գուրպան Պայրամի տուն է եւ պաշտամունքը ամբողջովին փակ, այսուհանդերձ հաստատ աղբիւրէ յայտնի է, որ Բ. Դուռը եւ Ոստիկանատունը վաղը պիտի բաց ըլլան: Այսօրուայ հայոց յախուռն շարժման մեծ նշանակութիւն կը տրուի պաշտօնական շրջաններէ:

Հայոց լրագրաց գրասենեակներն թիւրք պաշտօնեաներով լիքն են: Չափազանց յուզում ու շփոթութիւն կը տիրէ հայ ժողովրդեան ամէն խաւերի մէջ: Հայոց ընդհանուր տրամադրութիւնը կատաղութիւն է կառավարութեան դէմ եւ կը զգան, որ իրենք ալ ոյժ մ'են եւ կրնան իրենց դատն իրենց արիւնով պաշտպանել, քանի որ մեծ օրինակով մը այդ պայցուցին:

Կուռէն 4-5 ժամ յետոյ սուլթանի կողմէն մի փաշա պատրիարքի քով երթալով, զօրքերի առաջնորդութեամբ տարեր են ի պատրիարքարան, ուրկէ կրկին նոյն կերպով երկաթուղուց կայարանն առաջնորդուելու եւ անդի Մաքր գիւղ իւր տունն: Պատրիարքարան սրահին մէջ գտնուող սուլթանի վերջերս նուիրած օսմ. թուղարան եւ պատկերը կտոր-կտոր ըրած են:

Միեւնոյն ժամանակ երբ այստեղ մեծ ցոյցը կ'ըլանար, Կ. Պոլսէն մի քանի ժամ հետաւորութեան վրայ գաւառների հեռագրական թեւերն կտրատուած կը գտնան: Կառավարութեան սարսափը մեծ կ'ըլլայ. - չիցէ թէ գաւառներն ալ շարժման մէջ են եւ ինք լուր մը չի կրնար ունենալ-

«ՀՆՉԱԿ»

Պատմութեան Հետ Պիտի Հաշտուիս

Շարունակուած էջ 13-էն

Կը վերադառնամ իր լանտացի վարորդին: «Պատմութեան հետ պիտի հաշտուիս, որպէսզի կեանքը յառաջ երթայ»:

«Իրաքի մէջ մեզի կ'ըսէին, որ երբ դուրսի աշխարհը երթանք, կրնանք ձուլուիլ: Մենք դուրս եկանք եւ նոր աշխարհը տեսանք: Նոր աշխարհին մէջ ապրելով՝ մեր ինքնութիւնը պահեցինք, նոյնիսկ երբ ոչ հայերու հետ ամուսնացանք, քանի որ մեր հայկական արժէքները նաեւ դրինք ոչ հայերուն մէջ»:

Այսպի կեանքի հաւատամքն է այս: Հայուն համար հաշտուելու գործընթացը իր ազգային ինքնութիւնը եւ հաւատքը պահելու գրա-

ւականին մէջ է: Ատիկա հայուն պատմութիւնն է եւ՝ այդ պատմութիւնը յիշելն ու պահանջելը: Յիշելով եւ պահանջելով է, որ հայը պիտի հաշտուի իր պատմութեան հետ, որքան ալ որ երկար տեւէ այս ուղեւորութիւնը: Յիշելով եւ պահանջելով է, որ հայուն պատմութիւնը, իմա՝ համակ կեանքը, յառաջ պիտի երթայ: Իր լանտա եւ ամէնուր:

Յիշել' եւ պահանջել': Այս ալ հայուն պատմութեան հետ հաշտուելու պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնն է: Այս պարտականութեամբ եւ պատասխանատուութեամբ է, որ հայուն պատմութիւնը յառաջ պիտի երթայ:

Ապրե՛նք, որ Ապրի Արցախը...

Շարունակուած էջ 14-էն

Մանկապարտէզի տնօրէն Անահիտ Դանիէլեանը: «Նրանք են եկել այսօր համայն աշխարհին ասելու, որ մենք ուզում ենք խաղաղ մասնակցութիւն ունենալ սեփական հայրենիքում: Այսօր նրանք ուզում են ապրել իրենց սուրբ հայրենիքում,

որտեղ ապրել ու արարել են մեր ապուպայերը»:

Դահլիճի ներսում մի այլ աշխարհ էր: Խորանալով նրանց մանկական աշխարհում՝ մի պահ ներկաները կտրուեցին բոլորով զիրենք շրջապատող արհաւիրքից, անորոշութիւնից ու անարդարութիւնից:

«Ուիմպլտոն». Ալկարասը Եզրափախչին Յաղթեց Ջոկովիչին

Աշխարհի առաջին ռակետ Գաբրիել Ալկարասը առաջին անգամ նուաճեց Ուիմպլտոնի մրցաշարի տիտղոսը:



Եզրափախչին սպանացի թենիսիստը մրցեցաւ աշխարհի երկրորդ ռակետ, «Մեծ սաղաւարտի» մրցաշարերու 23-ակի չաղթող, «Ուիմպլտոնի» 7-ակի ախոյեան, 36-ամեայ սերպ Նովակ Ջոկովիչի հետ եւ առաւելութեան հասաւ 5 սեթէն՝ 1:6, 7:6 (8:6), 6:1, 3:6, 6:4: Պայքարը տեւեց 4 ժամ եւ 46 վայրկեան:

20-ամեայ թենիսիստն առաջին անգամ հասած էր Ուիմպլտոնի մրցաշարի եզրափակիչ:

Ուիմպլտոնի մրցաշարի մրցանակային հիմնադրամը 44,7 միլիոն անգլիական ստերլինգ էր:

Ալկարասը երկրորդ տիտղոսը նուաճեց «Մեծ սաղաւարտի» շարքին մէջ: Անցած տարի ան դարձած էր ԱՄՆ-ի բաց առաջնութեան ախոյեան:

Յենրիխ Մխիթարեան. Նպատակները Չեն Փոխուած

Իտալիացի գաւաթակիր եւ սուփերգաւթակիր Միլանի «Ինթեր» կիսապաշտպան Յենրիխ Մխիթարեան խօսած է նախապատրաստական փուլի մեկնարկի եւ նոր մրցաշրջանին նպատակներու մասին:



«Շատ ուրախ եմ, որ կը սկսիմ երկրորդ մրցաշրջանս «Ինթերի» մէջ: Ես պատրաստ եմ եւ խմբակիցներուս հետ առաւելագոյնը կու տամ, որպէսզի հասնինք մեր նպատակներուն:

«Անոնք չեն փոխուած. Սկուդետո, գաւաթ, սուպերգաւթ եւ Ախոյեաններու լիկայի մէջ հնարաւոր առաւելագոյնը:

«Յոյս ունինք, որ կը կրկնենք նախորդ մրցաշրջանի նուաճումները եւ կը հասնինք աւելին», - Մխիթարեանի խօսքը կը մէջբերէ «Ինթերի» կայքը:

34-ամեայ ֆուլթպոլիստի պայմանագիրը իտալական ակումբի հետ նախատեսուած է մինչեւ 2024թ. Յունիս:

Transfermarkt-ը Մխիթարեանի փոխադրման արժէքը կը գնահատէ 6 միլիոն եւրօ:

«Վալենսիան» Կ'ուզէ Չեռք Չգել Նաիր Տիկնիզեանին

Սպանական «Վալենսիան» հետաքրքրուած է Հայաստանի ազգային հաւաքականի եւ Մոսկուայի «Լոկոմոթիվի» կիսապաշտպան Նաիր Տիկնիզեանի ծառայութիւններով, կը հաղորդէ ռուսական Sovsport-ը:

«Վալենսիան» կ'ուզէ կնքել վարձակալութեան պայմանագիր, որ կրնայ ըլլալ երկու տարիով, յետագային 24-ամեայ ֆուլթպոլիստի փոխադրման իրաւունքը գնելու հնարաւորութեամբ:

Ռուսական մամուլը գրած էր, որ Նաիր Տիկնիզեանի ծառայութիւններով հետաքրքրուած են նաեւ սպանական «Ռեալ Մոսկեղադը» եւ գերմանական «Վոլֆսպուլերը»:

Նաիր Տիկնիզեանը Մայիսին եւ Յունիսին ճանչուած էր «Լոկոմոթիվի» լաւագոյն ֆուլթբոլիստ:

Անցած մրցաշրջանին Տիկնիզեան «Լոկոմոթիվի» հետ բոլոր մրցաշարերուն մասնակցած է 37 հանդիպման, նշանակած է 5 կոլ, կատարած է 5 կոլային փոխանցում:

Լուկաս Սելարաեանը 2 Կոլ Նշանակեց, Սակայն «Քոլոմպոս» Պարտուեցաւ

ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան հերթական խաղին «Քոլոմպոս Քրուն» հիւրընկալուեցաւ «Փորթլենտ Թիմպլըզէն» եւ պարտութիւն կրեց 2:3 արդիւնքով:



«Քոլոմպոսի» կազմէն երկու կոլի հեղինակ դարձաւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Լուկաս Սելարաեանը, որ աչքի ինկաւ առաջին խաղակէսի աւելացուած ժամանակին եւ 65-րդ վայրկեանին՝ հաշիւը դարձնելով 2:2: Վերջնաւորութեան «Թիմպլըզէն» կարողացաւ նշանակել երրորդ կոլը եւ հասնիլ յաղթանակի:

Արեւելեան քոնֆերենանսի մէջ «Քոլոմպոս Քրուն» 23 խաղէ յետոյ 36 կէսով 6-րդն է:

Մեքսիք Նուաճեց «Ոսկէ Գնթակի» Ախոյեանութիւնը



Ֆուլթպոլի Մեքսիքացի հաւաքականը 9-րդ անգամ ըլլալով նուաճեց «Ոսկէ Գաւաթը»՝ Հիւսիսային, Կեդրոնական Ամերիկայի եւ Քարիպեան Ծովի աւազանի երկիրներու «Ոսկէ Գնթակ» ախոյեանի տիտղոսը:

Ինկըլուտ քաղաքին «ՍՕ Նիթայ» մարզադաշտին վրայ՝ 75 հազար հանդիսականներու ներկայութեան, աւարտական խաղին մեքսիքացիները 1:0 արդիւնքով պարտութեան մատնեցին Փանամայի հաւաքականին: Միակ կոլը 88-րդ վայրկեանին նշանակեց հոլանտական «Ֆէյենուրտի» յարձակող Սանտիակո Հիմենեսը:

Կիսաեզրափակիչին Մեքսիք 3:0 արդիւնքով յաղթած էր ձամայքային, Փանաման յետխաղային 11-մեթրանոցներով պարտութեան մատնած էր ԱՄՆ-ի հաւաքականին (1:1, 11մ՝ 5:4):

Մ-19 Եւրօ-2023. Իտալիան Եզրափակիչին Յաղթեց Փորթուկալին

Իտալիոյ հաւաքականի յաղթանակով աւարտեցաւ Մալթայի մէջ կատարուած ֆուլթպոլի Եւրօպայի մինչեւ 19 տարեկաններու առաջնութիւնը: Եզրափակիչին իտալացիները մրցեցան Փորթուկալի պատանեկան խումբի հետ եւ առաւելութեան հասան 1:0 արդիւնքով:

Խմբային հանգրուանին Փորթուկալ իտալացիներուն յաղթած էր 5:1 արդիւնքով:

Իտալիան չորրորդ անգամ նուաճեց այս տարիքային խումբի եւրօպական տիտղոսը: Նախորդ յաջողութիւններուն հասած է 1958, 1966 եւ 2003 թուականներուն:

Մեսի Ներկայացուեցաւ «Ինտեր Մայամիի» Կազմէն Ներս

Ա մ եր ի կ ե ա ն «Ինթեր Մայամին» ներկայացուց խումբի նորեկներ, աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի 36-ամեայ յարձակող Լիոնել Մեսին եւ Սպանիոյ հաւաքականի ու «Պարսելոնայի» նախկին կիսապաշտպան, 35-ամեայ Սերխիօ Պուսկետսին:



«Շնորհակալ եմ Մայամիի բոլոր բնակիչներուն այս ընդունելութեան եւ սիրոյ համար: Ես երջանիկ պիտի ըլլամ այստեղ: Եկած եմ միշտ մրցակցելու եւ յաղթելու ցանկութեամբ, որպէսզի այս ակումբը շարունակէ զարգանալ եւ հզօրանալ: Երջանիկ եմ, որ ընտրած եմ այս քաղաքը եւ այս նախագիծը», - ըսաւ Մեսիի արարողութեան ընթացքին:

Մեսին «Ինթեր Մայամիի» կազմէն ներս հանդէս կու գայ 10 համարի խաղաչապիկով: Անոր նորամուտը կը սպասուի Յունիսի 21-ին:

«Ռիվեր Փլէյթ» 38-րդ Անգամ Յոջակուեցաւ Արժանթին Ախոյեան

«Ռիվեր Փլէյթ» Արժանթինի ախոյեանութեան աւարտէն երկու հանգրուան առաջ նուաճեց տիտղոսը:

25-րդ հանգրուանին 3:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Էստուդիանտեսին» եւ վաստակեցաւ 57 կէս:

«Ռիվեր Փլէյթ» 38-րդ անգամ հռչակուեցաւ Արժանթինայի ախոյեան: 35 տիտղոս ունի «Պոսա ձունիրոսը»: